թթվանի պակասության պատճենագի Ռասի, որինու ցցերի նըի առակ մասնը չեն փուլու, իսկ նըից մի բարձր զանգված մասնը, վորոնց հանողաբարու, մերթ թթվան են, մերթ մի ցիշ չարանում, արագ կերպով սպիրակ կողմից վաշնացված են: Խույնուն և վիճականներու բնափոյաց փառու և խօսակ նկարակներում և այլն, վորոնց նա բազմականացակ թթվան վրանկամել և զանգված, բայց վրան լինուն չի հաջոցված:

գակում են կողիւցիւումը թերեւի հիպոսկոպիկ ծոռները Մի այլ որինոկ կարող է լինել մալլուսը (Phallus). Մասդաշ մամանակ երա պազամարմինը վնասն է, եթու ներսում զարգանաւմ են բազիդիումները և այսող նրանց վրայից ընկերում են բազիդիուզարմինը և առանձին մամանակ երա պազամարմինը թաղանթից պարզաբնակ և կ բարձունքում ներքին պազամարմինը վարդի վրա կան բազիդիուզարմները, բարձրանաւմ ե արագակին յիշ կարացող վարդիկի վրա և ստանում և կանաչավաճ գույշի զանգակի ձև նկ. 68). Այս վիճակում առնելիք ինչի ուսուր ևս և արձունում, վարդը զարգանում և միջանքներին, որոնց առանձման են իրենց զարիկներին կողմ ապարները Դասաերթից համարյա բազալապին և զայտիկին ապարներ են, վարժեց զարթնուկներ ներանակության շահանեններ:



Նկ. 68.

1—սունկի թերթիկների ուղղակիզ հասավաները—Աց-
ուսազաւութեաց, ցույց են արգան սուրբների անկման
հետադեմները. 2—հիմնինիւումը, ուղղակիզները. 3—
բազիդիումները.

Մրիկայիմների կարգ (Ustilaginales).

Բոլոր մրիկայիմները պարագիտներ են և շատ կարևոր նշանակու-
թյուն ունեն հատկապիս հացանատիկային կուլտուրաների համար,
վարժոնց վրա նրանք առաջացնում են մրիկ կոչված հիմնդությունը:
Այդ հիմնդությունն ամենից հաճախ նկատվում և համարույսի ծաղ-
կային որդանների վրա և արտահայտվում է նրանում, վոր վերջիններս
գեֆորմացիայի յին յինթարկվում ու մամակի կերպով քայլայվում:
Այդ ժամանակ մնելի սպորների կուտակման շնորհիվ նրանք մուգանում
են և մի տեսակ այրված տեսք են ստանում (այստեղից ել հենց առա-
ջացել է մրիկ անունը նկ. 69):

Մրիկայիմների մեծամասնությունը հասկարույսներին վարակում և
հատիկը հողում մոմենտին: Այդ ժամանակ միցելիումը թափան-

ցում և ծիլի բողբոջի մեջ և նրա հետ միասին անում եւ Դրա հետեանքով զարգանում եւ մի ցողուն, վորն արտաքուստ առողջ և յերկում, բայց նրա մեջ հիմքից մինչև զագաթը լիքն և պարագիտի միցելիում մով։ Հասկավորվելուց քիչ առաջ հասկարույսի սաղմային ծաղկափթթության մեջ (հասկի կամ հուրանի մեջ) միցելիումն սկսում է առանձնապես ուժեղ կերպով աճել մեծանալ ըստ յերկույթին, մնազանյութերի աղղիցության տակ, վորոնք այդ ժամանակ առատորեն հոսում են դեպի այդ տեղը, Միցելիումի աճման հետեանքով ծաղկափթթության հյուսվածքը քիչ թե շատ քայլայվում է և միցելիումը ինչը վեր և ածվում կլոր մուգ գույնի բջիջների, վորոնք սնկի սպոր-



Նկ. 66. Amanita phalloides.



2

Նկ. 67. Lycoperdon.

1—մարմիկ արտաքին ձևը (Փացացըսե)։

2—բազիզիւմները։

Ներ են ներկայացնում և կոչվում են մը ի կ ա յ ի ն ս պ ո ը ն ե ր, Հենց այս վիճակումն ել տեղի յե ռ ունենում հասկակալումը։ Զարգացման այս տիպին են պատկանում՝ կորեկի, վարսակի փոշային մրիկը, ցորենի կարծր մրիկը և ուրիշ շատերը։ Մի քանիսի մոտ, ինչպես, որինակ, ցորենի փոշային մրիկի գեղպատմ, վարսակվում և արդեն բույսի վարսանդը, բայց նրանցից կարծեք նորմալ հատիկ և առաջանում, թեև նա իր ներսում սնկի միցելիումն և պարունակում։ Այդպիսի հատիկը հաջորդ տարին ծիլը ով, առանց դրսից վորեն վարսակում ստանալու, տալիս և մրիկով վարսակված բույս թեզ վերջապես, ուրիշ մի քանիսի մոտ, ինչպես, որինակ, յեղիպատացորենի բշտիկային մրիկի գեղպատմ, կարող և վարսակվել արդեն չափանաս բույսը։ Այստեղ միցելիումի տարածումը սահմանափակված է և սկզբում վարսակված հյուսվածքի տեղական ուռույցքներ և առաջացնում, իսկ այնուհետեւ այդ վարսակված

Հյուսվածքի մեջ միցելիումը վեր և աճվում մրիկային սպորների։
Մրիկային սպորները մատաղ ժամանակ յերկուական կորիզ են
պարունակում, վորոնց հետագայում ձուլվում են։ Մշելու ժամանակ
կողույցացին կորիզը մեծ մասամբ կիսվում և յերկու անդամ և այդ
ժամանակ տեղի յեւ ունենում քրոմոզոմների ռեզուլցիա։ Ստոցված
չորս կորիզներն անցնում են առման խողովակի մեջ, վորն այսուհետեւ
բաժանվում և մեծ մասամբ չորս միակորիզանի բջիջների՝ փոխարկվելով
այսպիսով ֆրազմորազեղիումի (նկ. 70, 1)։ Նրա բջիջների վրա առա-
ջանում են բաղիղիոսպորներ, վորոնց կարող են բողոքվել դեռևս
բաղիղիումից պոկվելուց առաջ և մանավանդ մննդային միջավայրի



Նկ. 68. Phallus.
(Փացացըմած)։

Նկ. 69. Հուկաբույսերի մրիկը.


1—ցորենի փոշե մրիկը (Ustilago tritici). 2—ցորոսկի փո-
շե մրիկը (Ust. avenae). 3—յեղիպատացըրենի բջութակու-
թը մրիկը (Ust. Maydis). 4—ցորենի ռազզ հասկը. 5—ցորենի
կարեր մրիկը (Tilletia tritici).

մեջ ընկնելուց հետո։ Բազիդոսպորները, ինչպիս նաև զբանցից առա-
ջանող բողոքվող բջիջները, հազլուկ են և պարզվում են, վոր նրանք
հիտերոթալային են (+ և -), Յերբ յերկու հավասարապեսք բա-
ղիցիոսպորներ (կամ նրանց բողբոջող սերունդը) միմյանց հանգիպում
են, կատարում են կողույցացիա և մեկի կորիզը անցնում և մյոււմ
մեջ։ Այս Առաջին դիալորիդ բջիջից առաջանում և դիալորիդ յերկորիդ

միցելիում, վորը միայն ընդունակ և պարագիտ կյանք վարելու Նըրանից հետազոյում առաջանում են մրիկային սպորներ.

Հասկարայսերի մրիկային սունկերի մեծ մասը պատկանում են ուսիլազ (Ustilago) սեփին, վորը, ինչպես և շատ ուրիշները, բազմաբժիշխատ բաղդադիում ունի, Նըրանց ասցրերվում են ալլիցիտն և ուրիշ մի քանիսը, վորոնք շրաժանված բաղդադիում ունեն: Նըրանց համար վորութիւն ներկայացուցիչ կարող և ծառայել *Tilletia tritici*-ն, վորն առաջացնում և ցորենի կարծր մրիկը: Նրա մրիկային սպորներ ծիկլում առաջանում և միարդից խոզովակ, վորի գաղաթին առաջանում են մեծ մասամբ ութը թերանման բաղդադիուսպորները: Դեռևս բաղդիումից վրա գտնված ժամանակ, Նըրանց գույրդպույտ կուպուլացիա յեն կատարում և ծլում են թափվելով և դառնում զիոլոցիդ միցելիում (նկ. 70, 3):

Մրիկայինները համարյա բարդ հարանակեային կուլուուրաների համար իիսուցիչ ընկող գուստառաներ են և շափազանց առանձիւմ են՝ վաշնացնելով բերքի մի-




Նկ. 70. Մրիկային սպորների ծլումը:
1—*Ustilago scabiosae*. 2—*Ust. Maydis*. 3—*Tilletia tritici*.

շաբաթի մասը (ԽՍՀՄ-ում հաճախ մինչև 20%): և ովկելի, իսկ միջին հաշվով մաս 3%): այն ինչ գրանց դեռ պայտաբնը շատ հասարակ բան և մեծ եփվելու և ուղիւս թանիք վար առանձինների մեծ մասը զարտերում և հազար երգ հասարակութիւնը, ուր նա անցնում և սկրացնի շատ մրիկներ, ուր ուրիշ հիմնական միջնորդութեազգութեան զարձնելիք և թրուն հանում են այսպիս կոչված այսուհետեւ մասն միջնորդ, այսինքն՝ հասկել մակար մեջ այնպիսի բուհամուր նյութերով և թրուն հանում այսպիս կոչված այսուհետեւ մասն միջնորդ, այսուհետեւ հասկել մակար մեջ այնպիսի բուհամուր նյութերով, վորոնց շմանցնելով իրենց հասկելներին, կարգանային վաշնացներ հասկելներին կզանք անկային առարկները Ամենից համար այս նորատակի համար զարծութում են ֆորմուլինի լուծույթ ($\frac{1}{100}$), ողջնարշուոց ($\frac{1}{100}$) և ախտանիման ուրիշ միջնորդները: Այժմ այս հիմնական միջնորդութեազգութեան շատ լայն կիրառում ունի ԽՍՀՄ-ում և հացարույների մրիկը իրան նվազել է:

Մրիկայինների ամենազվարդագոր ներկայացուցիչներն են՝ վարսեկի փոշեմրիկը (*Ustilago avenae*), սորնի փոշեմրիկը (*Ustilago tritici*), զարսւ փոշեմրիկը (*Ustilago nodosa*), կորիկի մրիկը (*Ustilago pauciciliatae*), յեղիպատուրենի բարիկազոր մրիկը (*Ustilago Maydis*), համարի (առահեանի) ցաղանային մրիկը (*Urocystis occulta*), սորնի կործր կամ զարշանուած մրիկը (*Tilletia tritici*):

Ժամկանունկերի կարգ (Uredinales).

Բոլոր ժամկանունկերը զանազան սերմարույսերի և պտերների պարագիտներ են: Մըրկայիններից սրանք առանձնապես տարբերվում են իրենց շատությամբ ու սպորարտադրությամբ, բազմազանությամբ, այդ սպորարտադրությունը վերջանում է հանգստացող սպորների առջացումով, վորոնք կոչվում են տելերուսպոներ և իրենց զարգացմանը համապատասխանում են մրկային սպորներին, վերջիններիս ծլման ժամանակ առաջանում ե ֆըրագմորադրիցում, վորը կազմված և մեկը մյուսի վրա ընկած չորս բջիկ (նկ. 73, 2):




Նկ. 71. *Puccinia graminis*.

1—պիկնիդներ (զերսեր) և եղիզեռմաներ (ներքեր) կծովուրքի տերեկ հատվածների վրա. 2—պիկնիդի հատվածներ (ուժեղ խոշրացընթած):

Ամենի կոմկերն պատկերացում կազմելու համար, վորուն որինակ կարելի յե քննարկել այսպիս կոչված հացաւաքի կայցին կամ գծային ժանդանքին ժանդանքին (Puccinia graminis) զարգացման ցիկլը, վորը չափազանց տարածված և կուտուրական ու վայրի հասկարույսերի վրա: Այստեղ յերեան են զալիս գերաճած հյուսվածքի նարնջագույն բժեր: Այս միջրջային հյուսվածքի տարածությունների մեջ մտնում և մեկի միցելիումը իր հառւստորիաններով: Այս միցելիումը պատկանում և անկի հապոյիդ սերնդին և կառուցված և միակորիզանի բջիջներից, վորի մեջ յուղի նարնջագույն կաթիւներ են պարունակում: Այդ միջրիումի վրա առաջանում են

սպորարտադրությունները—տերևի վերսի յերեսի մոտ պիկնիդները կամ սպոնտան իռւմները, իսկ ներքին մակերեսույթի մոտ —եցիդի ուժմները: Առաջինները սպորարտան մարմիններ են ներկայացնում, վորոնց մեջ շառավիղների ձևով մտնում են կարճ ըստ սպորակերներ և այստեղ իրենցից մամատում են շատ մանր միջրջիջնիդի գիրաներ, վորոնք կոչվում են պիկնիդապարմեր կամ սպորամացիաներ:

(նկ. 71, 2), Պիկնիդն սկզբնավորվում և հյուսվածքի խորքում միջը-
ցային տարածության մեջ, այսուհետեւ մասամբ դուրս և զալիս մա-
կրուսյթի վրա և նրանից սկսում և ծորալ մի քաղցր հոտավիտ հե-
ղուկ, վորի մեջ ընկոմված են լինում մեծ թվով պիկնոսպորներ։ Վեր-
ջիններս տարածվում են միջամտների միջոցով, բայց ինքնուրույն կեր-
պով նոր վարակում չեն կարող առաջացնել, Եցիդիումը նույնպես
սկսում և կազմվել հյուսվածքի խորքում միջրջային տարածության
մեջ և սկզբում ներկայացնում և հիփերի կծիկ, վորոնք կազմված են
միակորիզանի բջիջներից։ Այսուհետեւ նրա հիմնական մասում տեղի յէ
ունենում բջիջների գույք-գույյդ միաձուլում և զրա արդյունքը լինում
և այն, վոր առաջանում են յերկկորիզանի բջիջների մի ամբողջ շերտ։
Նրանք յերկարելով զլանածեն են զառնում և սկսում են եցիդիոսպոր-
ներ կոչվող յերկկորիզանի սպորների շղթաներ ու վերջիններիս հետ
հերթագայող բարակ թաղանթ ունեցող միջանկյալ բջիջներ առաջաց-
նել (նկ. 72). Սպորների այս զարգացող կոմպլեքսը դրսից զանգակի
նման պատված և հաստ թաղանթ ունեցող բջիջների շերտով, վորը



Նկ. 72.

1—յերկառասորդ և գեղեն փակ եցիդիումի հոտավածքը. 2—հաստ
և ըստված եցիդիումի հոտավածքը. պ—պերկզիում, ե—եցիդիոսպոր-
ներ, հ—հիփերի միաժյուսում։

կոչվում և պերիզիում է. Հետագա անման ժամանակ եցիդիումը մա-
սամբ դուրս և զալիս մակրեռույթի վրա՝ պատռելով տերևի եպիզեր-
միսը, նրա պերկզիումը զարգաթից պատռվում է, միջանկյալ բջիջնե-
րը լուծվում են, և եցիդիոսպորներն սկսում են զուրս ընկնել։ Այդ ըս-
տորները ցրվում են քամու միջոցով և հետագա զարգացման համար
պետք է ընկնեն հասկարույսերի տերևի վրա։ Այսուհետ նրանք առա-
ջացնում են միջրջային զիպլոյիդ միցելիում, վորը կազմված և յերկ-
կորիզ բջիջներից, նրա վրա տերևի եպիզերմիսի տակ առաջանում են
նոր սպորներ-ուրեզուսպորներ, վորոնցից յուրաքանչյուրը հաստատ-
ված և վոտիկի վրա և իրենից ձգածն յերկկորիզանի բջիջ և ներկա-
յացնում (նկ. 73, 1). Եպիզերմիսի պատռվածքով ուրեղուսպորները

դուրս են ընկնում և քամու միջոցով տեղափոխվելով մի նոր հասկաբույսի վրա, մի քանի որից այսաեղ նույնպիսի ռերդուսպորներ են առաջացնում: Ամառն ընթացքում այսպես մի քանի անգամ կրկնվում եր, և հասկաբույսերի տերևները զնալով ավելի շատ են ծածկվում ուրեապորների բարձիկներով, վորոնք չորսից իրենց մեջ յեղած նարնջագույն յուղի կաթիների ընդունում են այնպիսի տեսք, ինչպես ժանգի բժիշը յերկաթի վրա (այսուղից ել հենց առաջացել է «ժանդանինկեր» անունը): Ամռան վերջին նույն դիպլոյիդ միցելիումի վրա յերեան են զալիս նոր սպորներ—տելե յտուպիներ, վորոնք փոխարինում են ուրեապորներին:



Նկ. 37. *Puccinia graminis*.

1—ռեցիզուսպորները (ա.) և աեկայուպորը (ա). 2—աեկայուպորէ, ելումը.
3—բողիդիսպորները:

Սրանք նույնպիս վատիկների վրա են հստած, բայց իրենց կազմված են յերկու բջջից, վորոնք հասա և գորշ թաղանթ ունեն (նկ. 73, 1): Ծերիտասարդ ժամանակ նրանք յերկուական կորիզ են պարունակում, վորոնք հասումացման ժամանակ միաձաւըլիւով փոխարկվում են մեկ դիպլոյիդ կորիզի: Շնորհիվ տելեյուսպորների մուգ գույնի, նրանց պարունակող բարձիկները համարյա սև գույն են ստանում (առև ժանգը, վորը վեգետացիոն շրջանի վերջում հասկաբույսերի տերևներն ու ցողունները ծածկվում են յերկանակի շերտերով):

Տելեյուսպորը ծլում է միայն ձեռնելուց հետո, հաջորդ գարնանը Մլման ժամանակ նրա յուրաքանչյուրը բջիջը տալիս և

աճման խողովակ, վորի մեջ և անցնում դիպլոյիդ կորիզը: Այսաեղ նակիսվում եր ռեցիզուլցիօն յեղանակով, սրան հաջորդում ե յերկրորդ կիսումը, իսկ խողովակը բաժանվում է չորս բջիջի: Այսպիսով, ստացվում է չորսբջջամնի ֆրագմորապիդիում, և նրա յուրաքանչյուրը բջիջը առաջ է բերում մեկ բաղիդիսպորը (նկ. 73, 2): Բաղիդիսպորները քամու միջոցով տեղափոխվում են կծոխուրի տերեի վրա և այսաեղ ծիրով տալիս են հապլոյիդ միցելիում, վորը կառուցված է միակորիւդանի բջիջներից:

Հացահատիկային բույսերի ժանգամնկերի սպորտների շարքում վերաբեր չափով՝ առանձին տեղ են զբագլում պիկնոսպորտները, կամ սպերմացիոնները, վիրավճառ և նրանց ինքնուրուցին վարակում չեն առաջցնում, նորագույն հետազոտողները դրանց նշանակությունը հետեւյալ կերպ են լուսաբանում՝ պարզվում ե, վոր ժանգամնկերի, ինչպես և շատ ուրիշ բազիդիումիցեաների, բազիդիոսպորտները հետեւրթափկ են, և Ֆելով, առաջացնում են կամ (+) կամ (-) միցելիում. Յերիտասարդ եցիդիումի մեջ վերև նկարագրված բջիջների զույգ-զույգ միաձուլումը կարող է բրականանալ կամ իրար մոտ գտնվող յերկու տարանշան (+ և -) միցելիումների միակցումով, կամ մի հասկաբույսի պիկնոսպորտը մյուս հասկաբույսի միցելիումի վրա տեղափոխվելով, վորը և իրականանում ե միջաների միջոցով:

Այսպիսով, հացահատիկային բույսերի ժամկամելի զարգացման ցիկլում կան հետևյալ փակերը՝

1. Հապլոյիդ ֆազ Սա սկզբում ե բաղիղուպոներից և ներկայացված ե կծոխուրի վրայի հապլոյիդ միջելիումով՝ վրան պիկնիդ-ներով և եցիտիոնեմերի սաղմերով:

2. Դ ի պ լ ո յ ի դ գ ա զ ։ Ս կ ս վ ո ւ մ և ե ց ի դ ի ս ո ւ մ ի ս տ գ մ ի մ ե ջ կ ա-
տ ա ր վ ո ղ ը շ ի ց ն ս ե ր ի կ ո պ ո ւ լ յ ա ց ի հ յ ո վ և կ ա զ մ մ զ ա ծ ե՝ ա) ե ց ի դ ի ս ո ւ մ ի ո ր ն ե-
ր ի ց, բ) զ ի պ լ ո յ ի դ մ ի ց ե լ ի ս ո ւ մ ի ց, վ ո ր ը զ ա ր զ ա ն ո ւ մ և հ ա ս կ ա ր ո ւ յ ս ե ր ի
վ ր ա և վ ո ր ն ի ր վ ր ա ու ր ե դ ո ս ո պ ո ր ն ե ր և կ ր ո ւ մ, դ) հ ա ս կ ա ր ո ւ յ ս ի վ ր-
ա ս ա ս ջ ա ց ո ղ ն ո ր զ ի պ լ ո յ ի դ մ ի ց ե լ ի ս ո ւ մ ի ց, վ ո ր ը ն ո ւ յ ն ո վ ե ս ու ր ե դ ո ս ո պ ո ր-
ն ե ր և ա յ լ ն ու ն ի (կ ր ե ն վ ո ւ մ և մ ի ք ա ն ի ա ն գ ա մ), դ) տ ե լ ի յ տ ո ս ո պ ո ր-
ն ե ր ի ց:

Հառպլոյիկ և զիսպլոյիկ միցելիումները յերկումն ել պարագիտ են և զարդանում են այստեղ տարբեր բույսերի վրա—առաջինը՝ կծոխուրի, իսկ յերկրորդը՝ հասկարույսի վրա։ Այս յերեսոյթը, վորը լայն շափերով տարածված է նաև ուրիշ շատ ժանդանկերի մոտ, կոչվուած և տարատիրություն կամ հատերուցիւա։ Սակայն հայտնի յեն քաղաքան մեծ թվով միատիրային տեսակներ, վորոնց մի քանիսի մոտ յերկու միցելիումներն ել զարդանում են մի բույսի վրա, բնչպես ուրինակ, *Puccinia hellanthi*-ն՝ արևածաղկի վրա։

Այսուհետ զառ սեպակներ ունեն զարգացման կրթություն և կոչվում են վաշ
լիք ձևեր՝ Նրանց մաս թե ձեկ և թե մըսա ձեկ սպառաբռագրությունները զարդ
են ընկերության միացնելու ակերաբռներին են, վաշ համարյա միաց մասն են:

ժամանակների պարզացման զանազան ձևերը, ըստ իրենց թիվների, հաշվին և նրանց, վարդես պարզաբնակների, կենական պայմանների կողմանը Բյամբ, պարզաբնակների, վարդես բարերագին անցնողանակ և կենական բայցից զաւոս ուղերիւս Զարդացման լեռն տիկիւ, վարժ արտահայտվում և մի շաբաթ էրոր հաջորդող ուղարտափառ բանակներով, ոչ միտ կարու և մինչույն բայցից վար ովարտիւն մանավանդ այսպիսէ մի բայցից վար, վար ինքը արտա ովարտում և իւ շարպացման տիկիւ, Այս պար-

մաններում Շարպագը և յիշուս. յիշը՝ կամ զարգացման տեսքի մեջ մասի անդամախությունը—հասկացնելու գիտությունը՝ միջնինությունը ու նրա ոպերատվության անդամախությունը մեջ ուղիղ բարյալ վրա կամ զարգացման տեսքի կրծառանում՝ օպերատվությունը մեջ մասնիկի գործ ընկերելու չափութիվ. Առաջին զեղցում ստացվում է բազմամիաբնակություն, իսկ յիշըորդ զեղցում—ստացվում են վաշ լրիվ ձեռնորդական ընդ ամրանալով, թե մեկը և թե մյուսը կայուն են զարձել վրայ անառնենքի համար:

Հայանիք յի՞ն մաս 4000 անոնք մանկառանեկ նրանց պատճենաթիվ իմբրախութերը կառուցվածքի մեջ զվարդուածն Շառեյալի փրմոն վրա՝ 1) անձիյառապշի կառուցվածքի, վասիկնենքի վրա յի՞ն նրանց, թե առանց վասիկնենքի. յիշը լրիվ մեջնորդական մաս. Միութիշ, ինչպես ուրամիցեան (Uromyces) մաս և ոչին. 2) եցիցիւ ոպերատվության կառուցվածքի փրմոն վրա—յիշըդիմում կամ ինչպես վեր նկարացրած պահիցիայի և շատ արքինենքի մաս, թե առանց յիշըդիմումի յի, ինչպես մերամուսայի (Melampsora) և ուրիշնենքի մաս:

Ժանկառնեկերը, վարդի զանազան բույսերի պարագիտները, գործնական խոշը նշանակության ունեն. Նրանցից հապկազին մեծ նշանակություն ունեն հացանոտիկոյին բույսերի վրա պարզ անսպիռերը. Բայց նկարագրած նայանամիկալին մանկառնից (Rusc. graminis), այսուղ առատված են նաև արքինենքը՝ նաևար (արքինան) մուզ գործ մանկառանից (Rusc. dispersa), ցունին մուզ գործ մանկառանիլը (Rusc. trilobata), վեղին մանկառանիլը (Rusc. glumarum) և արքինենքը. Այսաւային զարգացման ընորդը ու գործ ներ կազմում արքինենքի զարգացման համակարգ հասկեները թիւ են լուսում և ստացված են գործ հացանոտիկային ժանկառներից համաշխարհային անհատացրյան կրտք թուար առքինենքն համար և մի քանի հարցուր միջնորդ զալլարի. Նշանակություն ունեն նաև արվածանիկի մանկառնիլը (Rusc. helianthi), վաւեր մանկառանիլը (Melampsora lini), աղնիկ մարման մանկառանիլը (Phragmidium rubi) և արքի շատերը. Ժանկառնեկերի զեմ մզկելիք պայցարու ու ովկի պարզ և, թա՞ն մրիկի զեմ մզկու պայցարու. Այսաւեր կարս և նշանակություն ունենալ մանկառցրած ծեռամբ շատ տալլ (Հացանոտիկի զարշերում պատճենվեցից), իսկ առատուիր անսպիռերի համար նշանակություն ունի նաև եցիցիւ արքինէ կնուխութիվ վաշնշացումը. Հացանոտիկային հառկարույների մեջ քանի անսպիռերը մանկառնեկով անձիլ պահու են զարտկածմ և ուղղիսի անսպիռերի մշակումը պայցարի անսպիռերից նախնական բաժականն ինչպար նշանակություն ունի:

Անկառար անկերի խումբը (Fungi imperfecti).

Անկառար անկերի խումբին են զառում այնպիսիները, վարժներ հազարը միցելիումի ընությունը ըստը անկերին են պատճենամ, բայց չեն հայտնաբերում մուշ պարկային և վաշ եւ բազիդիալ օպերատվություն և բազմանում են միայն կանիզիաների միջացով. Այս խումբը շափազան մեծ եւ, հազվագույն և մաս 20 հազար անսպիռ, բայց շատ երանցրյան ժանկառնեկություն խումբ եւ հազարներին եւ, վար այսաւեր զարգու մեր մասը կազմու և առկամիցեաների ներ, բայց նրանց մաս գենես համապատասխան պարկային օպերատվություն չի հայտնաբերված:

Կոնկառար անկերի խումբը այստեղ չափազանց բազմազան են: Վարդի պայցար սրինակ կարս և ծոռայիլ՝ մուլայինալ (Fusarium). Նրա մաս, կարճ ճյուղազգոված կանիզիաներինեցից պար, վարժներ հավաքիչեց փափակ բարձիկերը են կադման զարգանաւ և միայնու կանիզիաները, վարժներ շատ բնարու կառացվածք ունեն—բազմարժիք են և մեծ մասամբ մանկառանն նախած մարդինենքի և ունեն (Նկ. 74, 1), զիսեսպարիսալ (Gloesporium) անձի կարճ կանիզիաներիները, վարժներ համարվում են ներ չերտի ձեռք (պատյան). Իրենց ծայրերում նրանց մասնաւում են միութիւն կո-

Նիզիտներ (Նկ. 74, 2). Անսուժիայի (Septoria), Շոմայի (Phoma) & շատ ուշեցները ևս կոնդիզիտները առաջնութեան են՝ պիկնիդների մեջ, վարսոր ստվորութեան անառնչ մարմիններ են և վերելք նեղ բացվածք ունեն (Նկ. 74, 3).

Անկառար անկերը շափազանց առաօձված են բնության մեջ—թե վարսոր ստվորիտներ՝ և թե վարսոր պարագիտներ։ Եսու խոշոր նշանակության ունեցող անկա-



Նկ. 74. Անկառար անկեր։

1.—*Fusarium*. 2.—*Gloeosporium*. 3.—*Septoria*.

ուր անկերի թվից ուներ և առանձնեալ բուզարիանը։ Երբ բազմաթիվ անսուժիտը ևս անմասի վարսութեան են զանազան մշակովի բույսերի թե վերերկրյա և թե սուրերկրյա մասերը և նրանց գոշեչացման դրամա և զանազան նրանց առաջացրած հիմնային թրամաները կոչվում են ֆուզիուրի կամ էր։ Հայտնի յեն հացանառիկույին համարայիսերի զանազան ֆուզարիուզներ (զբանց թվում ձյան բարբառը աշխանցան բույսերի վրա, բամբակենու, վարչի և բազմաթիվ ուրիշ ֆուզարիուզներ)։

Անկերի ծագումը յով Խվայուցիան։

Անկերի ծագումը զանազան հեղինակների կողմից զանազան կերպ և մեկնաբանվում։ Մի քանիսը կարծում են, վոր դրանց առանձին խմբերը մեկը մյուսից անկախ ծագում ունեն և առաջացնում են

Հրիմուռների զանազան խմբերից (կանաչ և կարմիր լրիմուռներից), վրապես խոտորված կարգեր, չոռշիկի իրենց քլորոֆիլը կորցնելուն և սուլորոֆիտային կամ պարագիտային աննպառության հարժարվելուն (որովհիմափեկ ծագում): Ուրիշ հեղինակներ մնկերին՝ իրենց ծագումով համարում են միամնական խումբ (մոնոֆիլետիկ ծագում): Այս գեղգում մի քանի հեղինակներ դրանց դուրս են քերում կանաչ ջրիմուռներից, վրապես քլորոֆիլը կորցրած կրկնվող խումբ, մյուսները՝ միարդիչ շատ պարզ որգանիզմներից, ինչպես են մորսկավորները: Կանգնելով այս վերջին տեսակների վրա, մենք պետք են վերցնենք վրապես ամենառնական մնկեր—արքիմիցեանները: Մրանից մի քանիսի մոտ գեղես լրիվ չափով չեն մշակվել կազմվածքի բուսական և հատկապես մնկային գեղերը (որինակ, «լոպիդումը, վորը վեգետատիվ վիճակում թաղանթ չունի, ինչպես նաև չունի միցելիում), մյուսները ավելի հեռու յեն զնացել (որինակ, սիկոֆիզիումը, վորն ունի թաղանթ և սաղմետյին միցելիում):

Հետագա եղույթոցիան գնացել է միցելիումի և ավելի մեծ զարդարման ուղղակիությամբ, յերբ հնարավոր և դարձել նրա վրա մեծ թվով բազմացման որգանների առաջնաւոր, ինչպես այդ մենք տեսնում ենք ֆիկոմիցեանների մոտ: Դրանցից ոսմիցեանները պահպանել են իրենց սկզբնական ջրային կյանքը և արքիմիցեանների հետ կապվում են միշանկյալ մներով: Սակայն նրանց մեջ բարձր պերոնոսովորայինները հարմարվել են ցամացային պայմաններին, վորի կապակցությամբ կորցրել են զոսուպորները և բազմանում են թագանթով պատված ըսպորներով (կոնիդիաններով): Զիկոմիցեանները ներկայացնում են ֆիկոմիցեանների յերկորդ ճյուղը, վորն ըստ ամենայնի հարմարվել է ցամացային կյանքի և այս կապակցությամբ զոսուպորներ չունի: Նրանց ամենից շատ սուեցիտիզացիայի յենթարկված ներկայացուցիչների մոտ (հնատոմոֆիորայինների ընտանիքը) սպորանզիումները փոխարինված են կոնիդիաններով և միցելիումի մեջ յերեան են դալիս մինչապատեր: Այս գեները հետագա զարգացում են ստանում բարձր մնկերի—սակոմիցեանների ու բազիզիոմիցեանների մոտ, վորոնք լրիվ չափով հարմարվել են ցամացային կյանքին դրանցից ասկոմիցեանների դասը դասը պարզ կերպով առաջնապարկավորների միջոցով կազմում են զիկոմիցեանների հետ և մեռակշան պրոցեսի ձևով, վորն արտահայտվում է յերկու բջիջների միաձուլման մեջ, վորոնց պարունակությունը գամենաների չելացա եղույթոցիան գնացել է պարկերի թվի

Ասկոմիցեանների հետագա եղույթոցիան գնացել է պարկերի թվի

ազիւացման ուղղությամբ, իսկ պարկերը ստացվում են մի բեղմագործություններց. Դրան հասնում են զիալոյիդ ֆազի զարգացմամբ, յերբ այդ ֆազն ասկովենային հիփերի ձև ունի և սեռական կորիզները զոյզոյզույզ մոռենում են միմյանց և միաձուլվում պարկերի սաղմերի մեջ—նրանց ժայրենքին. Սրան գուլընթաց ընթանում են նաև պարզաբանված դաշտացումը: Ակրբում գա սաղմային ե, թույլ զարգացած թաղանթով և պարկերի վոչ կանոնավոր գասավորությամբ (շատ պլեկտակայինների մոտ) և հետագա եվոլյուցիան ընթացել ե այնպես, վոր սունկը հարմարվել ե ասքոսպորները ակտիվորեն դուրս շպրտելու ճանապարհով տարածվելուն: Այս կապակցությամբ պարկերն ստանում են յերկարացած ձև, իրենց ազատ ծայրերով կողմնորոշվում են վեղի վեր և պտղամարմնի ընդհանուր թաղանթը վերևում չի փակվում: Այսպիսով ստացվում ե յերկու հիմնական աստիճան՝ պերենոմիցեաներ և զիսկոմիցեաներ, ընդվորում վերջիններս իրենց պարկերի լայն շերտով բաց գասավորությամբ ամենից լավ են հարմարվել սպորների ցրման այս փունկցիային և պետք ե համարվեն վորպես ավելի բարձրաստիճան: Դիմումիցեաներից դուրս են բերվում գետնասնկերը, վարոնց մոտ սոսորերկրյա զարգացման կապակցությամբ պտղամարմնները կրկին անգամ նորից փակվում են և սպորներն ակտիվ ցրելու փունկցիան կորչում ե:

Բարձր մակերի մյուս կարգը—բաղիդիոմիցեաները—նույնպես, ըստ յերեսույթին, դուրս ե բերվում զիգոմիցեաններից, բայց նա նշանաբերի շափով ավելի յի խոտորվել դեպի մի կողմ և այստեղ կապերն անձան պարզ չեն: Ամենից առաջ այստեղ նկատվում ե սեռական որդանների լիակատար կորուստ, վորը մասնակի կերպով կա նաև շատ ասկոմիցեանների մոտ: Սեռական պրոցեսը փոխարինված ե ապոզամիայով—յերկու վեգետատիվ բջիջների միաձուլումով, ընդվորում հաճախ նկատվում ե միցելիումների ֆիզիոլոգիական սեռաբաժանություն (հետերօթալլիզմ): Բջիջների ապոզամիկ միաձուլման արդյունքը զիոլոյիդ յերկիրիզանի միցելիումի զարգացումն ե, վորը համապատասխանում ե ասկովենային հիփերին, բայց վորը տարբերվում ե նրանով, վոր նա այստեղ անկախ գոյություն ունի և մեծ մասամբ գերակռում ե զարգացման ցիկլում: Նրա վրա զարգացող բազիդիումները համապատասխանում են ասկոմիցեանների պարկերին:

Բազիդիալ անկերի հիմնական կարգը հոլոբազիդիոմիցեաններն են, վորոնք միարշից բազիդիում ունեն: Այս կարգը սկսվում ե այն ձևերից, վորոնք միայն սաղմանային պտղամարմնն ունեն, վորը սուբստրատի վրա փռված հիփերի հարթ միահյուսվածքի տեսք ունի (պարզագույն հիմնոմիցեաններ): Այս կետից եվոլյուցիան զնացել է պտղամարմնի բարգացման և նրա սպորների ակտիվ ցրման փունկցիային համարվելու կողմէ

(բարձր հիմնուսովցեաներ), Գաստերոմիցեաների մոտ այդ ֆունկցիան բացակայում և և նրանց պատղամարմինները մեծ մասամբ փակ են, իսկ ներսում անկանոն զառապլորված բազիզիումները են զանվում: Շատ զառատերոմիցեաները, զետնատնկերի նման, զարգանում են զետնի տակ և գույցն զենց զրանով և բացատրվում նրանց պատղամարմինների փակված լինելը: Այդպիսի ստորերկրյա ձևերը նախնական (պրիմիտիվ) ձևեր են համարվում, զրանցից ել արտածվում են բարձր վերերկրյա զառատերոմիցեաները: Բազիդիալ անկերի յերկրորդ կարգը—Փրազմորապիդիոմիցեաները, վորոնք բաժնված բազիդիում ունեն, կարող են հիմնական շարժից խոտորված ճյուղ համարվել: Նրանցից կիսասպեցիալիզացիայի յմնթարկված սապրոֆիտային ավրիկուլյարիայինները և դողդոզունները ունեն թեպետ բավականին պարզ կառուցվածքի պատղամարմին, սակայն զրանցից արտածվող մըիկային մնկերն ու ժանգաննկերը պարագիտոմի կապակցությամբ ցուցաբեռում են մի կողմից վորոշ պարզացում պատղամարմինների կորուստի ձևով, իսկ մյուս կողմից՝ մի ամբողջ շարք առանձնահատումէ հարմարեցումներ: Այս հարմարացումները առանձնապիս արտահայտված են ժանգաննկերի մոտ, վորոնք բաղմաթիվ սպորատվություններ ունեն ու հաճախակի տարատեր են:

Անկերի նկարովիան.

Վորապես մնջլորոփիլ որգանիզմները, մնկերը իրենց ածխաթթվային սննդի պահանջը կարող են ծածկել միայն որգանական միացությունների հաշվին: Այս ստումով ընդգեղվում է նրանց առավելագույն կապը բնության մեջ բռւսական ծագում ունեցող որգանական նյութերի հետ, ինչպես այնպիսինների, վորոնք հարուստ են զիթավորապիս ածխաջրաներով և ունեն թթու ռեակցիա, մի բան, վորը համեստիս համապատասխանում և մնկերի մննդառությանը և աճմանը:

Մնկերի մեծամասնությունը ստումով դիտներ են, այսինքն ապրում են մեռած բռւսական մեացորդների վրա: Բայց բացի դրանցից կան նաև պարագիտներ ու սիստիոններ, վորոնք միանում են ուրիշ կենդան որգանիզմի հետ, նույնպես զիթավորապիս բռւսական որգանիզմի հետ: Այս զեպպում պարագիտները, մնվելով կենդան հյուսվածքի հաշվին, վերջիվերջո մնություն են նրան, իսկ սիմբիոնների մոտ նկատվում են ավելի հավասարակշռված հարաբերություններ և բույսի հյուսվածքը ստվորաբար չի վոհշանում:

Մնկերի զոյության այս յերեք տիպերի միջև չի կարելի խիստ տարրերություն դնել, վորովնետե հաճախ սապրոֆիտաներն ել մոտամբ կենդան հյուսվածքի հաշվին են զարգանում և ընդհակառակը, պարագիտները հաճախ դարձնում են սապրոֆիտային պայմաններում: Այս զեպպում տարրեր ներկայացուցիչների մոտ այս ընդունակություններն

արտահայտված են տարրեր աստիճանով։ Այս հարաբերակցությունները կարելի կլինի հասկանալ, յերբ պարզաբանենք նրանց ծագումը։ Անկասկած, այստեղ սկզբնականը հանդիսանում է ասպրոֆիտիզմը, վորությանատուկ և այժմ ել տեսակների մեծամասության համար։ Սապրոֆիտները մեծ մասամբ պահանջնառ չեն անսպի ազգայուրի նըկատմամբ և թեև դրա չնորդիվ բնության մեջ հեշտությամբ հարմար սուրստրատ են գտնում. բայց հաճախ պետք եւ դիմանան այդ սուրստրատի վրա մյուս ասպրոֆիտների գնմ մզգող մրցմանը։ Այդ մրցումից կարելի յև խուսափել միայն հարմարվելով մրցակիցների համար անպետք սուրստրատներին։ Այստեղ առանձնապես լայն հարավորություններ եւ ընձեռնում պարագիտիզմը, վորովինետն ամեն մի կենդան բույս այնպիսի յուրահատուկ առանձնահատկություններ ունի, վորոնք վոչ միայն անկարելի յեն գարմառում նրա վրա պարզացումը, այլև այն պարագիտների զարգացումը, վորովինետն ամեն մի կենդան բարեկապես չեն հարմարվել դրան։ Ներկայումս հայտնի յեն մակերի ավելի քան 10 հազար տեսակներ, վորոնք վորովես պարագիտապրում են բույսերի վրա (և մոտ 1000 պարագիտ կենդանների վրա)։ Ընդունին պարագիտիզմին հարմարվելու աստիճանը տարրեր տեսակների մոտ տարրեր եւ, Ընդհանուր առմամբ այստեղ կարելի յև տարրերեւ հետեւյալ աստիճանավորությունները (նորից նրանց միջև առանց կարուկ սահման դնելու)։

1. Խսկական ասպրոֆիտներ, վորոնք պարագիտային պայմաններում չեն հանդիպում։

2. Ֆակուլտատիվ պարագիտներ, վորոնք նորմալ ապրում են վորովես սապրոֆիտ, բայց կարող են նաև վորովես պարագիտ ապրել մանավանդ տկարացած բույսերի վրա։

3. Ֆակուլտատիվ սապրոֆիտներ, վորոնք նորմալ ապրում են վորովես պարագիտ, բայց յերբեմն հանդիպում են նաև սապրոֆիտային պայմաններում։

4. Խսկական պարագիտներ, վորոնք բնության մեջ ապրում են միայն պարագիտային պայմաններում։ Սրանցից մի քանիսը համենայնդեպս գեռ չեն կորցրել սապրոֆիտարեն մավելու ընդունակությունը և կարող են անել խսկական կուլտուրայի պայմաններում, իսկ մյուսները կորցրել են նաև այդ ընդունակությունը։ Վերջիններս կոչվում են ողարտագիր կամ ողարտիգատ պարագիտիզմի բարձր աստիճանավարպես դրանց որինակ կարող են ծառայել բոլոր պլաստիկայինները, ժանգամնկերն ու բարձր պերսոնապորտայինները։

Ցերե ցույց տված աստիճանավորությունների հետեւանցով շնչվում եւ սապրոֆիտիզմի ու պարագիտիզմի միջև յեղած հատու սահմանը, ա-

ողա այդ սահմանն ազելի ևս մթագնված և պարագիտիզմի ու սիմբիոնի միջև, թե մեկ և թե մյուս դեպքում սունկը միանում և մի ուրիշ կենդան բռւյսի հետ և նրանից ստանում և մնանդանյութերի մի զգալի մասը: Իսկ յեթե մնաք, չսարելով դրան շատ կամ թիշ չափով սիմբիոնի ու տարրերում ենք պարագիտիզմից, ապա այդ զվարավորապես անում ենք այն պատճառով, վոր շատ դեպքերում համակեցությունը մշտական եւ նաև մյուս կոմպոնենտի համար, վորը նրան ընդհանուրում նշանակած չափով չի վեառում և նույնիսկ, ըստ յերեսույթին, հայտնի առավելություններ և տալիս: Ազույուցիայի դեռք այսպիսի սիմբիոնը դուրս և բերվում պարագիտիզմից, այն ել վոչ նրա առանձնապես բարձր աստիճաններից:

Սիմբիոնի համար անհնահայտնի որինակ են ծառայում քարագուերը (ամեն ստորեւ) և միենորիզները:

Միեռի կողմէ և կոչվում բռւյսի արմատի (համակապես նրա ծայրային ճյուղավորութերի) միակցումը մնկի հիֆերի հետ: Այդպիսի միկորիզներ շատ տարածված են դասուազն խոտաբույսերի ու բնափայտային բռւյսերի մոտ, բայց մի քանիսի, բնչպես, որինակ, որոշիվականների և հավամրգինների մոտ, նրանք պարտադիր են, իսկ ուրիշների մոտ՝ միայն ֆակուլտատիվ (կամավոր):

Հաս կառուցվածքի տարրերում են ներքին և արտաքին միկորիզ: Առաջինի մոտ մնկի հիֆերը համարյա բացառապես կինարոնացած են արմատի ներսում, վորտեղ նրանք զնում են միջրջային տարրածությունների միջով, և իրենց բջիջների մեջ, իսկ արտաքին միկորիզի դեպքում հիֆերը ծածկոցի նման պատում են արմատը: Միկորիզ մնկերը համախ սպորներ չեն տալիս և այդ պատճառով եւ նույնացման չեն յենթարկվուած: Նրանք ազելի վորոշ են հավամրգինների ու մեր մյուս բնափայտային տեսակների մոտ: Հավամրգինների մոտ զոյլություն ունի ներքին միկորիզ, և նրա կազմության մեջ մտնում են ֆումա մնկերի ցեղից (Phoma անկատար մնկերից ե): Հիֆերը, տարածվելով արմատի բջիջների մեջ, ինարկե, նրանց ածխաջրաներից ստանում են ածխածնային սնունդը: Մյուս կողմից, այսպիսի սընման դեպքում, բնչպես ցույց ե տրված մնկուսացրած կուլտուրայում կատարված հետազոտության միջոցով, սունկը կարող ե յուրացնել մթնոլորտի ելեմննատար (տարերային) ազուրը: Հավանական ե, վոր ըույսը միկորիզայում ստանում և այդ յօւրացված ազուրի մի մասը—այս կամ այն ազուրային միացությունների ձևով: Այսպիսով, այսանդ ստեղծվում են ամսպիսի հարաբերություններ, վորոնք նման են պարագային բակտերիաների ու լորագիրի բռւյսերի միջև աեղի ունեցող հարաբերություններին: Դրա չնորհիվ հավամրգինները կարող են պար-

դանալ այնպիսի հողերում, վորոնք աղքատ են մատչելի ազգային միացություններով:

Մեր ընտափոյտային տեսակներն ունեն արտաքին միկորիզ և նրա կազմության մեջ մտնում են գլխավորապես զանազան հիմնումիցեաներ, վորոնք տարածվում են աֆրասային հողերում: Պարուբելով արմատը, հիֆերը մտնում են նրա մեջ և նրա նույնիսկ բջիջների ներսը, ստանալով նրանցից աժխաճնային մնունդ, իսկ մյուս կողմից, արտաքին հիֆերը լայն չափերով տարածվում են հողի մեջ, փոխարինելով այդ տեղ բացակայող արմատային մազիկներին: Այդ պատ հիֆերը հողից վերցնում են ջուր և հանքային նյութեր, ինչպես նաև, կարող ե պատահել, մի քանի որգանական նյութեր, իրենց հերթին արմատի բջիջները մարսում են իրենց մեջ թափանցած մի քանի մնկային հիֆեր և ողոտազործում են նրանց իրեն աղային և մտնումը վորուելու որգանական մնունդ: Սառերի համար այսպիսի սիմբիոզը մշական չի, իսկ մնկերի համար դա ավելի պարտապիր է: Այստեղ նկատելի յե մնկերի մի քանի տեսակների ավելի սերտ կապը ծառերի վրաց տեսակների հետ: Որինակ, աղարիկոնը կապված է յեղնու հետ, յուղատունկը—սոճու, ժանգառունկը—սոճու, ժանգառունկն ու զեղնազորչ սոճունկը—կեչու և զողզոյնուն կազմամախի հետ: Վերոնիշյալ արժեքավոր ուսելի մնկերը մինչեւ այժմ չի հաջողվել արհետական մշակման յինթարկել, վորը, ըստ յերևոյթին, բացատրվում է նրանով, վոր նրանց համար պարտապիր և միկորիզի կազմումը:

11. ԿԱՐԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ (LICHENES)

Քարաքոսերը չեն ներկայացնում իրենց ծագմամբ ինքնուրույն ստորին բույսերի խումբ, վորովետեւ նրանց մնկի (մեծ մասամբ պարկավորներից) և ջրիմուտի (կանաչներից և կապտականաշներից) միացությունն են ներկայացնում: Սակայն այս միացության արդյունքը ներկայացնում է յերկու կոմպոնենտներից, վորակապես տարրեր նոր մարմին, կարծեք մի նոր որգանիզմ, վորը մի շարք մորֆոլոգիական ու եկոլոգիական առանձնահատկություններ և զրուվորում: Այդ պատճառով քարաքոսերը կարելի յէ զիսել, վորպես մի հատուկ, թեև իր ծագմամբ վոչ ինքնուրույն խումբ, մանավանդ, վոր նրանց իրենց և վույսուցիայի հատուկ ուղին ունեն:

Արտաքուստ քարաքոսերը չափազանց բազմազան են: Նրանք լինում են մօխրագույն, դեղին, զորչ, յերբեմն համարյա սև գույնի և տարրեր ձեփ: Ընդհանրապես քարաքոսերի մեջ տարրերում են:


1. Ե եղ և այսին քարաքոսերը չափազանց բազմազան են: Այդ կեղերիկներն ուժեղ կալչում են սուրստրատին և նրանից առանց վիճակիու չեն պոկվում (նկ. 75):

2. Թերթային քարաքոսեր, վարոնք գորզովենարալ (թիկունքավորովայնային) թիթեղների ձևունն, ինչ առաջարտափառ հետայնքան ածուքը չեն միացած, այլ պլատ-վորապես ուժույնիուների նմանվող ընձյուղների միջոցով և հեշտ կերպով բաժանվում են նրանից (նկ. 76).


Նկ. 75. Կեղային քարաքոսեր քարի վրա (բնական մեծությամբ):

Լրու ճյուղավորված բնի և այլ ձևեր ունեն, ինչ առաջարտափառ հետայնքան միացած են, միայն հիմքով և մնացած մասերով նրանից ազատ հետանում են (նկ. 77):

Հաստ անառանձիւական կառուցվածքի տարրերում են հոգեսմեն-



Նկ. 76. Parmelia-ի թերթային թուլութ ազատեցիւներ (առ փոքրիկ չըշանեաբ ըստ գույնի ողաչ): (թույլ խոշորացրած):



Նկ. 77. Cladonia-ի թիթեղներ (բնական մեծությամբ):

բային և հետեւ սմերային քարաքոսեր: Առաջին տիպն ավելի նախնական և նրա համար վորովես որինակ կարող և ծառայել կոլլեմա (Collema): Նրա ջրիմուռը պատկանում է թելային կապտականաչ ջրիմուռներից նոստոկ ցեղին և առաջացնում է լորձունքի զանդ-


ված, վորի ներսում բոլոր ուղղություններով գնում են սնկային թերթը (նկ. 78):

Նետերումներ քարաքոսները ավելի բարդ կազմություն ունեն: Այստեղ ամենից առաջ տարրերում են կեղևային շերտը և միջուկը: Առաջինը կազմված է մեկ կամ մի քանի շերտերից, վորոնք կարծես պարինքիմատիկ բջիջներից կազմված լինեն, առուր միացած են մեջանց և իրականում ներկայացնում են սնկի ուժեղ միահյուսված հիֆեր, իսկ յերկրորդը (միջուկը) կազմված է մնկային հիֆերի թույլ միահյուսվածից: Թերթաձև քարաքոսների մոտ կեղևային շերտը հաճախ զարգացած է և վերենի, և ներքենի կողմէց, ընդվորում ըածրի կողմէց նրանից գուրս են զալիս հիֆերի փնջեր, վորոնցով թալլուն ամրանում և սուրսարատին: Միջուկի մեջ, անմիջապես կեղևային շերտի տակը, դասավորված են ջրիմուռները, վորոնք այստեղ ընդհանրապես գոնիղիաներ են կոչվում (նկ. 79), ուստի նրանց կրող շերտը կոչվում է հատկապես զոնիդիալ շերտ: Այդ շերտից գուրս հատկրութեալ քարաքոսների մոտ ջրիմուռներ չեն:

Եսատ քարաքոսների մոտ կեղևային շերտի արտաքին մակերևութիւնը վրա, իսկ յերբեմն նաև ավելի խոր հյուս-

վածքներում, կազմվում են առանձին, ջրի մեջ չուժվող, նյութեր, վորոնք կոչվում են քարաքոսային թթուներ: Հաճախ նրանք դեղին և այլ գույներով վատ գունավորված են լինում և թալլունին տալիս են այս կամ այն հատկանշական գույնը:


Գոնիղիալ շերտում սնկի հիֆերը շատ անզամ կիող պարուրում են ջրիմուռներին և, ըստ յերեսույթին, նրանից ստանում են մի քանի սննդանյութեր, հավանականորեն, զլիսավորապես ածխաջրատաներ. բայց ջրիմուռն ել իր հերթին քարաքոսի ներսում տանելի կենսական պայմաններ և զանում, վորովնետն այնտեղ նա կիսվելով բազմանում է և ընդհանրապես այլասեռման չի յինթարկվում: Կարելի յն կարծել, վոր



Նկ. 78. Collema-ի համեմետ թալլունի կորզանքը:

Նա մնկից ստանում ե ջուր և հանքային աղեր, վորոնք սունկը ստունում ե սուբստրատից, նույնպիս լուսավորման հարմար պայմաններ ե գտնում: Մյուս կողմից, յերբեմն նկատվում ե, վոր սունկը սնվում ե թուլացած և մեռնող ջրիմուռների հաշվին, այսինքն՝ թալլում վոր մասերում սիմբիոզը փոխարկվում ե մնկի պարագիտիզմին, սունկը սնվում ե ջրիմուռներով:

Բնության մեջ մինչնույն տեսակներին պատկանող ջրիմուռները հանդիպում են նաև քարաքոսից դուրս, աղատ վիճակում, այսինչ սունկը, շատ ստկավ բացառությամբ, աղատ վիճակում չի հանդիպում և նույնիսկ արհեստական կուլտուրայում նաև չանգամութեան անունում: Այստեղից, ինչպես նաև վերը արված նշումներից, վորոնք վերաբերում են յերկու համակեցողների նյութափոխության բնույթին, կորելի յև յեղբակացնել, վոր քարաքոսի մեջ սունկը ընդհանրապես ավելի շատ կախում ունի ջրիմուռից, քան ընդհակառակը, թեև քանակապես սունկը գերակռում է քարաքոսի մեջ:




Նկ. 70. Հետերօներ թալլումի՝ կարգածքը:

1—ջրիմուռները. 2—վերին և ներքին կեղային շերտերը.

Ժացումը ընդհանրապես տեղի յե ունենում կամ շատ պարզ կերպով, այս ե թալլումի կառորներով, կամ հատուկ սորեղ ի անելը ըստ ուղղութեան կուլտուրայի շերտը պատճեն է կազմված են ջրիմուռների և այդ ջրիմուռներին պարուրող մնկի հիֆերի փոքրիկ կտորից: Նրանց վերև՝ մեջ կեղային շերտը պատճեն է և վերջիններս դուրս են ընկնում փոշու ձևով և քամու միջոցով տեղափոխվելով հարմար սուբստրատի վրա, զարգանում և տալիս են քարաքոսի նոր թալլու: Խեղիքաները ներկայացնում են թալլումի մակերևույթի վրա առաջացած յելուսաներ և նույնպես կազմված են ջրիմուռից ու մնկից (նկ. 80). Դրանք կոտրվում են և ծլելով նույնպիս թալլու են առաջացնում: Բացի դրանից սունկն ինքն առաջաց-


նում և սեփական սպորատվություններ, վորոնց հիման վրա և կատարվում է քարագլուխի հիմնական դասակարգումը:

Այստեղ զանազանում են՝ 1) դիսկամիցետային բարախոսեր (*Disco-lichenes*), որոնց սունկը պատկանում է դիսկոմիցետներին և առա-



Նկ. 80.

1—Ծալլածի հատվածը, յերեսմ են սոցեզիտները. 2—Հույնը, յերեսմ են էպիֆիտները:




Նկ. 81. Ապոտեցիումի հատվածը:

ջացնում և ապոտեցիումներ (Նկ. 81): Այստեղ են դասվում տեսակների մեջ մասը: 2) պիրնամոմիցետային բարախոսեր (*Pyrenolichenes*). Վերջիններին սունկը պատկանում է պիրենոմիցետներին և առաջացնում է պիրիտեցիումները. 3) բազիդիալ բարախոսեր (*Basidiolichenes*). Որոնց սունկը պատկանում է հիմնատմիցետների տելիֆորա ցեղին և ի ապրեբյություն մյուսներից պատահում են նաև ազատ վիճակում: *Basidio-*

lechenes-ների թիվը փոքր և և նրանք բացառապես տրոպիկական յերկրներում են առկրում:

Առկապորները կամ բազիդիոսպորները թափվում են գուրս և ծլելով, յեթե հարմար ջրիմուռի հանդիպեն, այդ դեպքում կկազմվի քարաքոսի նույնպես մի նոր թալլոս (նկ. 82).

Թարաքոսներն աճում են չափազանց դանդաղ (մի տարվա ընթացքում



Նկ. 82. Քարաքոսի թալլոսի զարգացումը անկային սպորներից և ջրիմուռներից:

1—ակղքնական սպորիան. 2—ավելի զարգացած ըստաղիան. 3—անկային սպոր. 4—ջրիմուռ. 5—էպիֆիլ:

նը զիխավորապես այն ե, վոր հանդիսանալով բուսականության պիոններներ անրերի սուրստրատի վրա, նրանք աստիճան՝ արար նախապատրաստում են այդ սուրստրատը բարձր կարգի բույսների համար:

Մարդու համար ամենակարենը քարտքոսը զիխավորապես գիշերավամամուռներ (Cladonia-ի տեսակներ), վորք մեծ տարածություններ և զրավում տունդրաներում և հնարավոր և զարձնում այստեղ յեղջերվագությունը. Քարաքոսի մի քանի տեսակներից (Roccella տեսակները) ստացվում ե լակմուս:

մի քանի միլլիմետրից մինչև մի յերկու սանտիմետր) և զբա հետեանքով չեն կարող մրցել մյուս ավելի արագ աճող բույսների: Հետո Ուստի նրանք հարկադրված են նաև հանչելու ավելի անընդուրի տեղեր և տարածված են մերկ ժայռերի վրա, ծառերի կեղենի, ցանկապատերի ու պատերի վրա, ինչպես նաև սրճու անտառների մնարերի հողերում, տառնդրայում և այլ տեղեր:

Բնության մեջ նըրանց նշանակությու-

ԲԱՐՁՐ ԲՈՒՑՈՒԹ

1. ԱՐԴՅԱԿՈՒՄԱՅՈՒՆԵՐԻ ՑԻԳԸ (ARCHEGONIATAE):

Բնդիմանուց բնօւրագիրը.

Արքեգոնիային բույսերը, վորոնք բնորոշվում են իգական սեռական որգանի՝ արքեգոնիայի՝ առկայությամբ, սովորաբար ստորաբաժանվում են յերեք դասի՝ *Bryophyta*՝ մամուակերպներ, *Pteridophyta*՝ պատրակերպներ և *Gymnospermatae*՝ մերկասերմներ։ Սակայն վերջին 2—3 տասնամյակներում կատարված հետազոտությունները, և հատկապես բրածո ձեռքի հետազոտությունները, ցույց տվեցին, վոր մեզ ժամանակակից *Pteridophyta*-ները (գիտնամամուները, ձիաձեռները և պըտերները) առաջներում ապրած *Pteridophyta*-ների հային մասցորդներն են, վորոնք չափազանց հարօւտ և բազմազան են յեղելով ախեղոյում ու մեղողոյում, յերբ նրանք իշխող ձեռք, եյին յերկրագնդի ըստուականության մեջ և իրենց գրանիք եյին գնումնարա վրա Հայտնաբերված են հակայական քանակությամբ այնպիսի ձեռք, վորոնք հաճախ չափազանց յուրորինակ են և ունեն բարդ կառուցվածք և շատ խոշոր չափերի յեն հասնում:

Այս բոլոր հետազոտություններն ստիպում են եյական փոփոխություն մտցնել արքեգոնիալ բույսերի դասակարգության մեջ և նախկին *Pteridophyta* դասը բաժանել առնվազն չորս ինքնուրույն դասերի։ Այսպիսով, ամբողջ *Archegoniatae* տիպը բաժանվում է հետեւյալ վեց դասերին։

1. *Bryophyta*՝ մամուակերպներ, ժամանակակից մամուններն ու լերպամամունները։

2. *Psilophyta*՝ պսիլոֆիտներ, բրածո, հնագույն մեզ հայտնի բույսեր են չափազանց յուրորինակ կերպարանքի, զրկված արմատներից և մեծ մասամբ տերևներից։

3. *Lycopsidea*՝ գիտնամամուակերպներ։ Ժամանակակից բույսականության մեջ գրանցից զերծ են մասցել միայն զետնամամուն ու սեղագինելին։ Բրածո մինակութներկայացված են մեծ քանակությամբ, գլխավորապես բնափայտային ձեռք։

4. *Sphenopsida*, կամ *Articulatae*—սեպատերևառձևայիններ, կամ հողավորներ, ժամանակակից բուսականության մեջ սրանք ներկայացված են հանձին ձեռաձետի, բրածո վիճակում հայտնի յեն սրանց պատկանող շատ ձևեր, սեպատերևներ, սիգիլարքիաններ և այլն:

5. *Pteropsida*—պտերակերպներ՝ ժամանակակից և բրածո պտերները: Այսուղ են գասվում նաև իժարեղունները և մարտացիականները:

6. *Gymnospermae*—մերկասերմեր՝ ժամանակակից ստույնները, զինկորոն, փշատերևներն ու *Gnetales*-ները, այնունետև բրածո սերմագոր պտերները, կորդախանները և բննետիտները:

Մամակերպների դասը (Եցորդիա):

Այս դասին են վերաբերում պարզ կազմություն ունեցող և արմատից զրկված բույսերը, վորոնք իրենց բարձր ձևերում մասնաւոված են ցողունի և տերենների, իսկ նըանց ստորին ձևերը տալիս են զետնին փռվող թալլում Սերունդների հերթափոխությունը պարզ արտահայտված են, ընդուրում զիխավոր իշխող սերունդը սեռական (գամետոֆիտը) սերունդն եւ անսեռ սերունդը (սպորոֆիտը) թույլ և զարգացած և միշտ միացած եւ գամետոֆիտի հետ Սեռական որգանները—անտերիդիումներն են (արտականները) և արքեգոնիումները (իզականները), Բեղմանավորությունը տեղի յեւ ունենում շարժուն սպերմատոզոյիզների միջոցով: Մամակերպները ստորաբաժանվում են յերկու յենթադասի՝ *Hepaticae*—լարդամամունների և *Musci*—տերեավոր մամունների:

Լարդամամունների յենթադասը (Hepaticae).

Այս յենթադասին են պատկանում դորզովենտրալ կազմության պամետոֆիտ բույսեր (այսինքն գամետոֆիտի վերին մասը միշտ այլ կերպ և կառուցված, քանի ցածրի մասը): Ստորին ձևերի մոտ նա կազմված և պիռված թալլումներ, իսկ բարձր ձևերի մոտ—մասնաւոված և ցողունի և տերենների: Անսեռ սերունդը (սպորոգոնիումը) կազմված և վուտիկից և տուփիկից. վերջինի մեջ զարգանում են սպորները և բարակ զսպանակներ: Սպորների մեջ ժամանակ պրոտեննմայի ստացիան թույլ և արտահայտված:

Այս յենթադասի գլխավոր կառ չեղն են՝ 1) *Marchantiales*, 2) *Jungermanniales*:

Մարշալայիններ: կարգը (Marchantiales):

Marchantiales-ների համար վորպես ներկայացուցիչ կարող և ծառայել մեր բուսականության մեջ սովորական մարտնչիան (Marchantia polymorpha) (նկ. 83 և 84), վորի ուսումնասիրությամբ կա-

բող ենք ծանոթանալ կարդի բոլոր բնորոշ յուրահատկությունների հետ նա առաջացնում է բավականին լայն, ժապավենաձև թալլոմներ, վորմաք փոքրում են գետնին, թալլոմները զիսուսումիկ ճյուղավորություններ են առիս և ճյուղերի ծայրերին փոքրիկ փոփրիկների մեջ տեղավորվում են թալլոմի անման կետը: Այսուեղից և թալլոմը անում և հենց այսուեղից և կատարվում նրա ճյուղավորումը, թալլոմի ցածրի մակերևույթից դուրս են գալիս նուրբ սիզոյիզները: Նրանք միաբարձիչ անգույն թելիկներ են, վորոնք խորը մանում են հողի մեջ: Ծիզոյիզները Marchantia-ի թալլոմն ամրացնում են հողին և միեւ-



Նկ. 83. *Marchantia polymorpha*, արական թալլոմ:





Նկ. 84. *Marchantia polymorpha*, բարձր թալլոմ:

նույն ժամանակ նրան ջուր և վերջինիս մեջ լուծված ազեր են մատակարարում:

Բացի սիզոյիզներից, թալլոմի ցածրի մակերևույթի վրա տեղավորվում են միաշերտ մուգ մանիչակագույն թերթիկներ, այսպիս կոչված ամֆիգասարիոմներ կամ վորովայնային թերթիկներ: Դրանք սաղմնային տերմներ են համարվում: *Marchantia*-ի թալլոմի ներքին կառուցվածքը բավականին բարդ է: Վերևի կողմից (նկ. 85) նա ծածկված է վերին եպիգենիմիսով: Վերջինիս տակ մի շերտ կազմելով դասավորված են ռոդային կամերաց-ները: Արանք ընդարձակ խորշեր են և ունեն շեղանկյունու կամ անկանոն բազմանկյունու ձև և միմյանցից առանձնացված են միաշերտ պատերով: Կամերաների հատակից անում, բարձրանում են բազմաթիվ շասիմիլյատորներ, վորոնք կարճ և յերբեմն ճյուղավորված թելիկներ են ներկայացնում և կազմված են քլորօֆիլային հատիկներով հարուստ բջիջներից: Վերջիններիս վրա յն ընկնում ողի ածխաթթվից ածխածինն ասիմիլյացիայի յենթարկելու գլխավոր աշխատանքը, կամերաները դրսի ողի հետ հաղորդակ-

ցում են հերձանցքերի միջոցով, վորոնք դասավորված են վերին եզրին գերմիսի վրա, յուրաքանչյուր կամերայի դիմաց մեկական հատ ։ Հերձանցքը լայն բացվածք և, ավելի ճիշտ կտրն խողովակ, վորը յեղրված և մի ամբողջ շարք մեկը մյուսի վրա դասավորված ըլլիներով։ Ողային կամերաների առկ գանգում և անցկացնող հյուսվածքը, վորը թալլումի հաստության գլխավոր մասն և կտրմում, վերջինս կազմված և բարակ պատեր ունեցող պարենքիմատիկ ըլլիներից։ այդ հյուսվածքի մեջ կուտակվում և ուղարկած թալլումի ներքեաի մակերևույթը ծածկված և



նկ. 85. *Marchantia polymorpha*. թալլումի լոյնության հասվածքներ։

հեշտությամբ ցրվում են անձրևային հեղեղների միջոցով և յերբ ընկենում են բարենպաստ պայմանների մեջ, սկսում են ծիլը՝ սկզբավորելով նոր թալլումներ։ *Marchantia*-յի սեռական վերաբրտաղը թյունուարտանային վրա գանգում է սեռական օրգանների կազմությամբ ու դրանից հետո կառարվող բեղմավորությամբ, վորի հետևանքով առաջանում և սպորանդիումը կամ անսեռ սերունդը։ Պրական սեռական օրգաններն անտերիպիումներն են։ Դրանք առաջանում են այսպիս կոչված արական պատվանդանների վրա, վորոնք թալլումի ձևափոխված ճյուղեր են։ Արական պատվանդանը (նկ. 83) կտրատված յեղրերով սկավառակի ձև ունի, վորը տեղավորվում և վատիկի վրա վոր Այս վերջինս յերիտասարդ պատվանդանի մոտ կարճ և, իսկ նաև մոտ-իր

յերկայնքով ուղիղ ձգված։ Սկավառակի վերնի կողմում (նկ. 84) տեղափորփում են բազմաթիվ ձգածներ, վորոնք արտաքին միշտավայրի հետ հաջորդակցում են փոքրիկ նեղ անցքով։ Սրանք պնտերիդիալ խորշերն են, վորոնցից յուրաքանչյուրի մեջ լինում և մի անտերիդիում։ Ինքն անտերիդիումը բավականին խոշոր ելիպսաձև մարմին է, վորը նստած և կարճիկ վոտիկի վրա։ Նա ունի միաշերտ պատ, վորի ներսը լցված և չափուանց մանր սպերմագեն բջիջներով։ Յուրաքանչյուր սպերմագեն բջիջ սկզբնավորում և յերկու սպերմատոզիդի, վորոնք պարուրած և վորոված մարմիններ են և իրենց առջեկ մասում յերկու մարմի ունեն։ Սրանց միջոցով սպերմատոզիդը ջրում շարժումներ և կատարում։ Արքեզոնիումները — իգական սեռական որգանները — տեղափորփում են իգական պատվանդանների վրա, հատուկ թալլումների

վրա (*Marchantia*-ն յերկառան բույս ե) (նկ. 84), ուստի առաջնային հագածքը Անտերիդիումները բանի շառավիր ունեցող բազմանառագայթ աստղի ձև ունի, վորը նստած և վոտիկի վրա։ Վոտիկը, ինչպես արական պատվանդանի մոտ, սկզբում կարճ և լինում, իսկ բեղմանավորությունից հետո խիստ յերկարում և աստղը բարձրացնում և թալլումից վերև Արքեզոնիումները տեղափորփում են պատվանդանի ներքին կողմում աստղի ճառագայթների միջև (նկ. 87) և փոքրիկ կուրայի ձև ունեն, վորի ներքեւի փքված մասում, վորովանում գտնվում և ձվարջիջը և վորովայնային խողովակային բջիջը։ Արքեզոնիայի վերներ նեղ մասից — վզիկից — անցնում և խողովակը, վորը պարօնակում և մի շարք պարանոցային խողովակային բջիջներ։ Արքեզոնիայի պատը միաշերտ եւ Արքեզոնիաները նստում են խմբերով, շրջապատված են հատուկ ծածկութով — պերինե և ցիտո մով, և իրանց վզիկներով կախվում են ցած։ Ցերը արքեզոնիան հասունանում եւ, բացվում և իր զագաթից, այդ ժամանակ խողովակային բջիջները փոխարկվում են լորձուածի, վորը և լցնում և վզիկի ամրող անցքը Արքեզոնիաները բացվում են անձրենի կամ առաս ցողի ժամանակի նույն այդ ժամանակին եւ բացվում են անտերիդիումները Նրանք պատվում են կատարից և սպերմատո-



նկ. 85. *Marchantia polymorpha*. Արտկան պատվանդանի հագածքը, Անտերիդիումներ.

պոյի զները անտերիդիալ խորշի անցքով գուրս են գալիս Զըի կաթիլ-ների հետ սպերմատոզոսի զները ընկնում են արքեզոնի իաների վրա և թափանցում են նրանց խողովակի մեջ, Սպերմատոզոսի զներից մեկը միանուղիում և ձվարջիցի հետ, կատարելով այդպիսով նրա բեղմանվորումը: Բեղմանվորված ձվարջինը պատվում է թաղանթով և ինկուբակում և կիսվել և դամում և սպորոզոնիում—անսեռ սերունդ, կամ սպորնֆիտ, *Marchantia*. Դրա հետ միաժամանակ աճում են նաև ինքը պատվանդանը և նրա ճառագայթները, վորոնք բեղմանվորության մոմենտին սեղմը ված են լինում վոտիկին, բացվում են հեռանալով միմյանցից: Սպորոզոնիումը կազմված է ովալաձև տուփիկից և կարճ վոտիկից, վորի բայսացած հիմքը—հառատորիան—ամրացնում և սպորոզոնիումը իդական պատվանդանին (նկ. 88): Դրանց սպորզոնիումը շրջապատված է թափանցիկ պարկով—պերիանցիումով և մինչև հասունանալը պատված է լինում արքեզոնիումի վորովայի մեծացած պատվված այսպիսի կոչված խռովով: Սպորոզոնիումի հասունացման մոմենտին խռովը պատրաս




Նկ. 87. *Marchantia polymorpha*. Դրական պատվանդանի հասունանալը՝ Արքեզոնիումներ:

վում եւ Տուփիկի մեջ առաջանում են սպորներ ու փոքրիկ զապանակներ կամ ելատերաներ: Սպորները հաստ թաղանթով պատված ելիուսաձև բջիջներ են, զապանակները յերկար, բարակ թելանման բջիջներ են, սրացած ծայրերով: Նրանց թաղանթների ներսի մակերևույթի վրայով անցնում են յերկու պարուրածներ, վորոնց

Հարունիվ դսպանակները կարող են ողի խոնավության փոփոխման ժամանակ վոլորվել ու արձակվել Տուփիկն իր գագաթից բացվում են, և նրա միջից սպորները ունենակները մասսայորեն ցրվում են, և այդ ժամանակ զապանակները, վիրունացներով սպորների զանգվածը, նպաստում են նրանց ցրմանը, Սպորը, ընկներով խոնավ հողի վրա, սկսում է ծիրար Նա տալիս և մի կարճ թեր, վորը աստիճանաբար փռխարկվում է թիթեղիկին Հենց այս վերջինը փռխարկվում է Marchantia-ի թալլոմի, Այսպիսով, նրա զարգացման ցիկլն ավարտվում է: Այս ցիկլում մնաք տեսնում ենք յերկու սերնդի հերթափոխություն՝ սեռական սերնդի, վորը կրում է սեռական որգանները, գամետոֆիտի, և անսեռ սերնդի՝ սպորոֆիտի, վորն առաջացնում է անսեռ բազմացման տարրերը՝ ըստորները:

Դամետոֆիտը կազմված է բուն թալլոմից և նրա վրա առաջացող պատվանդաններից, վորոնց վրա տեղափորված են սեռական որգանները, սպորոֆիտը կազմված է սպորովովներումից, գամետոֆիտը, հետևաբար զվարվություն սերունդն է, իսկ սպորոֆիտն ավելի թույլ և զարգացած և հասցված և առանձին որգանի աստիճանի, վորն իր զարգացման մեջ ամբողջովին կախված է գամետոֆիտից: Այս դիմքը բնորոշ և վոչ միան Marchantia-ի համար, այլև ամրող Եցորիա գասի համար, Յերկու սերունդների միջև բացի մորֆոլոգիական ու ֆիզիոլոգիական տարրերություններից, կա նաև տարրերություն նրանց կորիզների կառուցվածքի տեսակետից: Դամետոֆիտի կորիզները յերկու անգամ ավելի քիչ քրոմոզոմ ունեն ($n=9$), քան սպորոֆիտի կորիզները ($2n=18$), Բեղմանավորության ժամանակ տեղի յե ունենում քրոմոզոմների թվի կրկնապատկում, իսկ սպորների առաջանալու ժամանակի, հատկապես սպորների մայրական բջջի կորիզի կիսման ժամանակի, տեղի յե ունենում նրանց ռեզուլցիան:

Marchantiaceae կարգն իր մեջ միացնում և բաժականին մնա թիզ կազմոց, բայց ընդհանուր տաճաճք միակերպ, ներկայացուցիչները, նրանք բոլորն են, ինչպես



Նկ. 88. *Marchantia polymorpha*.
Հասունացած սպորովովներում
յերկայնակի համար ցըլ:


և Marchantia-ն, ունեն զետնի վրա փայլող և զիխոսամերկ ճյուղավորված թալլուներ, գործոց մերբ ամելի յերկար են լինում, մերբ՝ ամելի կարճ Նրանց նաև յն կառուցվածքն ունեն, ինչպես և Marchantia-ն, տարրերություն նկատվում և միայն մանրամասն թալլուների մէջ, ԽՍՀՄ-ում ամենից համար հանգիպող մարդանշիքիներին են՝ *Marchantia polymorpha* և *Pegatella conica*, վրանց բնորոշում են կուռճճ խոսկող պատվանդաններով, Նրանց անուն են խոնավ անդերուն Այսունեան համար հանգիպուտ են *Riccia*-ի անունները, վարսոց ապրում են խոնավ կազմային հազի վրա:

Յունգերմանիայի մինչեւ կարգը (Jungermanniales).


Jungermanniales կարդին պատկանում են բազմաթիվ և շափողանց այլտպան կառուցվածք ունեցող մեմբր, վորոնք սակայն անտառամիկական պարզ կառուցվածք ունեն: Նրա ստորին ներկայացուցիչներն ունեն փառնին փոփոխ զիխոսամերկ թալլուներ, այս ինչ բարձր ներկայացուցիչներն արգել մասնապես են ցողունի ու տերենների, և այս վերջիններս ցողունի վրա դասավորվում են յերեք շարքով — յերկու շարքը թիկունքային են, վերին, իսկ մի շարքը ցածի յն, վարովայնային, վերջինները առաջիններից տարրերվում են իրենց ձևով ու մեծությամբ, այնպես, վոր թիկունքավորվանային՝ կառուցվածքը պահպանվում եւ Այս եայ-

նկ. 89. *Pellia epiphylla*-ն իր սպորանզիումներով, բային սահմանային ձևերը կապված են միմյանց հետ բավականին տատիճանաբար գնացող անցումներով: Անտիբիդիումները և արքեգոնիումները անմիջական կերպով տեղափորված են թալլուների և ճյուղերի վրա. Հատուկ պատվանդաններ չեն կազմվում: Տուփիկների մեջ զարգանում են սպորներ ու զապանակներ, վոտիկը ամելի լավ և արտահայտված, քան *Marchantiales*-ի մոտ: Չիորդանալով յաւնդերմանիայինների քննարկման ժանրամասնությունների մեջ, վերցնենք Նրանցից միայն յերկու որինակ՝ մեկը պելլիան (*Pellia epiphylla*) — ստորին, թալլումային ձևերից, մյուսը խիլօսցիֆութ-ը (*Chiloscyphus polyanthus*), վորը պատկանում է բարձր տերկացողունավորներին:


Պելլիա-ն (*Pellia epiphylla*) (նկ. 89) առաջացնում է նեղ, ժապավիճանածն, գետնի վրա փոփոխ թալլուներ, վորոնք քիչ թե շատ ուժեղ ճյուղավորված են: Ճյուղերի ծայրերին տեղափորվում են անման



կետերը. Թալլոմի ցածրի մակերևույթից դուրս են գալիս քաղցմաթիվ որդոյիդներ (բացառապես հասարակներ), վորոնք թալլոմին ամրացնում են նողին և ջուր են մատակարարում: Թալլոմի կառուցվածքը վերին աստիճանի պարզ է. նա կազմված է պարինքիմատիկ բջիջներից, վորոնք ամուր կերպով միացած են միմյանց Հյուսվածքները վոչ մի հատուկ դիֆերենցիացիա չունեն, միայն մի քիչ կարելի յեւ տարրերին վերին ու ցածրի եպիդերմիները: Բացի դրանից, պարինքիմայի մի քանի բջիջներ կրում են վոչ լրիվ ողակաձև հաստացումներ, վերևի եպիդերմիսի և նրան անմանակից շերտերի բջիջները մեծ քանակությամբ քլորոֆիլային հատիկներ են պարունակում: Սեռական որդանները—անտերիդիումները և արքեգոնիումները—անմիջականորեն դասավորված են թալլոմի վրա, նրա վերևի կողմում: Անտերիդիումները մեծ քանակությամբ զարգանում են թալլոմի միջին ջղի ուղղու-



Նկ. 90. *Pellia epiphylla*. Թալլոմի լոյնակի հասվածքը, անտերիդիումով:



Նկ. 91. *Pellia epiphylla*. Արքեգոնիումները

թյամբ և նստած են հատուկ անտերիդիումային խորշերում յուրաքանչյուր խորշում մեկական հատ: Ինչ վերաբերում է անտերիդիումին (նկ. 90), նա մի գնդաձև մարմին է, վորը նստած և կարճամկանի վրա և ունի միաշերտ պատ: Նրա պարունակությունը կազմված է մասր սպերմազեն բջիջներից, վորոնք սկիզբ են տալիս յիրկմարակավոր սպերմատոզույիզների: Արքեգոնիումները խմբերով տեղավորվում են հատուկ խորքերում, վորոնք քիչ յնտ են գտնվում թալլոմի անման կետից: Նրանք ունեն նույն կառուցվածքը, ինչ վոր *Marchantia*-յի արքեգոնիումները (նկ. 91): ցածրի փշված մասում—վորովայնում գտնվում են ձվար ջիջն ու վորովայնի խորովակային բջիջը, պարանոցը կարճ և և պարունակում է իր մեջ մի շարք պարանոցային խողովակային բջիջներ: Անտերիդիումների արքեգոնիումների բացու-

և ը թեղմնավորումը տեղի յեն ունենում անձրևային յեղանակի կամ ուժեղ ցողի ժամանակի Անտերիդիումը բացվում և կատարից և սպերմատոզոյի զնները գնում, անցնում են ջրի մեջ. ջրի հոսանքը վերջիններին տեղափոխում և դեպի արքեդոնիումները և պարանոցի խողովակով, վորը լցված և խողովակային բջիջներից կազմված լորձունքով, թափանցում են վորովայնի մեջ. Այսուղի սպերմատոզոյի զններից մեկը միաձուլվում և ձվարջից հետ և թեղմնավորում և նրանու թեղմնավորված ձվարջիցը անմիջապես սկսում և կիսվել, վորով և սկիզբն և տալիս շապորովնիումին Զափահաս սպորովնիումը (նկ. 92). Կազմված և տուփիկից ու բազ դարձացած վոտիկից, վոտիկի հիմքը փոխարկվել և ծծանի, կամ հառաւստրիայի, — մի հատուկ որգանի, վորի սպնությամբ ըստորոգոնիումը ամրանում և թալլումի վրա և նրանից կանում և սպորովնիումի անման համար անհրաժեշտ մննանյութերը, Տուփիկի մեջ զարգանում են սպորները և դապանակները. դրանց մեջ մասը իրար հետ միանալով փունջ են կազմում, վորը ամրացած և տուփիկի հատակին. Սկզբնական շրջանում սպորովնիումը թափնակած և թալլումի խորքում և ծածկված և զլիսոցով, վորը սուսացվել և արքեդոնիումի մեծացած վորովայնային. մասի պատից. Այս վիճակում նաև ձմեռում է: Դարնանը նրա վոտիկը արագ և շատ ուժեղ յերկարում է, վորի հետևանքով տուփիկը պատռելով զլիսաղիքը, տարվում և բարձր, թալլումից վեր (նկ. 89). Տուփիկի պատը այնուհետև պատրսվում և և սպորները ըլլվում են. Ծերը ընկնում են բարենպաստ պայմանների մեջ, նրանք ծլում են և սկիզբն են տալիս *Pellia*-ի մոտ, ինչպես և *Marchantia*-ի մոտ, մենք գտնում ենք սերունդների հերթափոխներյուն, Սեռական սերունդը կազմված և թալլումից, վորը սեռական որգաններ և կրում, իսկ անսեռ սերունդ կազմում և սպորովնիումը: Սրա մոտ նույնպես, ինչպես *Marchantia*-յի մոտ, այս յերկու սերունդները միմյանցից տարբերվում են մորֆոլոգիապես, ֆիզիոլոգիապես ու բջջաբանորեն:



Նկ. 92. *Pellia epiphylla*.
սպորովնիումի մերկայա-
կան հատվածը.

Առաջի նոր թալլումների: Այսպիսով, *Pellia*-ի մոտ, ինչպես և *Marchantia*-ի մոտ, մենք գտնում ենք սերունդների սեռական և անսեռ սերունդների հերթափոխներյուն, Սեռական սերունդը կազմված և թալլումից, վորը սեռական որգաններ և կրում, իսկ անսեռ սերունդ կազմում և սպորովնիումը: Սրա մոտ նույնպես, ինչպես *Marchantia*-յի մոտ, այս յերկու սերունդները միմյանցից տարբերվում են մորֆոլոգիապես, ֆիզիոլոգիապես ու բջջաբանորեն:

Pellia-ն պատկանում և այսպիս կոչված անտիրոդինային յուն-

գերմանիաների յենթակարգին (J. anakrogynae), վորոնց բնորոշ դիման ե, վոր սրանց մոտ արքեղոնիումներն ու դրան համապատասխան սպորոգոնիումները միշտ սկզբանավորվում են անման կետից մի քիչ հեռու, դրա չնորհիվ թալլոմի աճը չի ընդհատվում: Այս խումբը շափաղանց հարուստ և ներկայացրեցիչներով, վորոնք իրենց հերթին շափաղանց բազմազան կերպարանց ունեն: Այս բազմազանության պատճառն այն է, վոր այստեղ մենք ունենք, մի կողմից՝ թալլոմային ձեմքեր, իսկ մյուս կողմից՝ տերևավոր ձեմքեր, և միննույն ժամանակ առաջինները և մյուսները միմյանց հետ կապված են միջանկյալ ձեմքով: Մեր բուսականության մեջ, բացի *Pellia*-ից, բավականին հաճախ պատահում է *Blasia pusilla*-ն, վորը նույնպես թալլոմային ձեւ է, բայց պվելի բարդ քան *Pellia*-ն: ավելի սակայն հանդիպում է *Fossombronia*-ն, մի տերևացողունային ձեւ:

Մեր յերկրորդ որինակը—խելասիփուս (*Chiloscyphus polyanthus*) արգեն տերեւվացունային ձեւ է հանդիսանում (նկ. 23): Նա ունի թույլ, բարակ ցողուն, վորը փրավում է զետնին: Նրա վրա դասավորվում են յերկու շարք կոր և շատ թեք զրված տերևներ: դրանք թիկունքային տերևներն են: Իսկ ցողունի ցածրի կողմում, վորը դեպի հողն է դարձված, գտնվում է ելի մի յերկրորդ շարք—վորովայնային տերևների կամ ամֆիպատորիումների շարքը: Նրանք իրենց ձեռվ ու մնեալթյամբ խիստ տարբերվում են թիկունքային տերևներից: Հենց այստեղ ել տեղավորվում են սիզոյիզների փնջերը: Անտերիդիումները և արքեղոնիումները, վորոնք նույն կառուցվածքն ունեն, բնչ վոր *Pellia*-ի մոտ, առաջանում են զանազան բույսերի վրա, նըրանց կարճիկ հյուպերի վրա: Սպորոգոնիումը ինչպես և *Pellia*-ի մոտ, այստեղ նույնպես, կազմված է լավ զարգացած վոտիկից—հառաստորիայից, վորը սպորոգոնիումին ամրացնում է բույսին, և տուփիկից, վորի մեջ առաջանում են սպորները և զապանակները: Սպորներից ցըկելուց առաջ վոտիկը ուժեղ կերպով յերկարում է և տուփիկին հեռացնում է տերևներից ու հատուկ ծածկույթից, վորի մեջ մինչ այդ թագնված եր սպորոգոնիումը: Տուփիկը ճնշքվում է չորս փեղկիկի և սպորները



Նկ. 23. *Chiloscyphus polyanthus*.

ցրվում են: Սպորից ծլում և զամբանում և *Chiloscyphus* բռւյսը Այս վերջինը հանդիսանում է զամենափիտ, իսկ սպորոֆիլը կազմված և սպորոգնիումից:

Chiloscyphus-ը այսպիս կոչված ակրոգին յունգերմանիների յինթաղասի (J. akrogynae) ներկայացնուցիչն է, զորոնց համար բնուրոշ և այն, զոր արքեգոնիումներն ու սպորոգնիումներն առաջանում են ընձյուղի զագաթին: Սա մի չափազանց ընդարձակ խումբ է, զորը՝ բացառազիկ կազմված և բազականին բազմատեսակ կերպարանը ունեցող տերեացողունավոր ձևերից: Մեր բուսականության մեջ դրանցից ամենից շատ տարածված են՝ *Chiloscyphus*-ից զատ, *Radula complanata* և *Plagiochilla asplenoides*.

Մամուռների յենթագառ (MUSC!).

Այս յինթաղասին պատկանում են միշտ ցողունի և տերմաների մասնաւոված բռւյսերի Յոզընները ունեն շառավիղային կառուցվածք և ծածկված են տերեներով, զորոնք նրա վրա դասավորված են նեղ պարուրի ձևով և համարված են զագաթում բազրովի նման: Սեռական որդաններն անտերիդիումներն են և արքեգոնիումները: Սպորանզիտումը կազմված և տուփերից, զորը նոտած և թիշ թիշ շատ յերկար վուտիկի վրա և ծածկված և մի զյուղազվ, զորը արքեգոնիումի վորովայնից և առաջանում: Տուփերիկ ներսում գտնվում են մի հատուկ սյունյակ: Սպորոգնիումի մեջ առաջանում են միայն սպորներ, իսկ զապանակներ չեն կազմվում: Գրուռնեմայի ստացիան ուժեղ և արտահայտված: Այս յինթաղասի զյուղավոր կարգերն են՝ 1) *Bryales*—կանաչ մամուռները և 2) *Sphagnales*—առդիային կամ սպիտակ մամուռները:

Կանաչ մամուռների կարգ (Bryales).

Իրեւ այնպիսի որինակի, զորի վրա կարելի յի ծանոթանալ այս կարգին բնորոշ բոլոր գծերի հետ, մենք վերցնում ենք մեր բուսականության մեջ սովորական մամուռը, այսպիս կոչված ցանց մամուռը—*Polytrichum* (*P. juniperinum*, *P. commune*, նկ. 94): Նա աճում է խիս ճիմերով անտառների խոնավ հողերում, ճահճներում, մարգագետիններում և այլ տեղերում և ունի ուղիղ կանգնած, բարձր չնյուղավորվող ցողուններ, զորոնք խիս ծառզված են կոշտ սուր տերեներով. *P. juniperinum*-ի մաս ցողունը լինում է մինչև 10սմ, իսկ *P. Commune*-ի—մինչև 40 մ): Ցողունը իր ցածրի մասում փոխարկվում և ստորերկրյա մասի—կոճղարմատի, զորը փոփում է հողի մեջ, իսկ այս վերջինից արդեն դուրս են գալիս ուղղոյթիչները, զորոնք ամրող բռւյսին ջուր և զրա հետ միասին հանքային աղեր են մատու-

կարարում: *Polytrichum*-ը, ինչպես և ընդհանրապես մասունքը,
 արմատներ չունի Ցու-
 զունի ներքին կառուց-
 գածքը բավականին
 բարդ է: Նրա կենա-
 րմասում գտնվում է փո-
 խադրող անոթախուր-
 ձը: Վերջինս կառուց-
 ված և ջուր փռիադ-
 րող ելեմննաներից,
 վորոնք ներկայաց-
 նում են յերկար հաստ
 պատերով խողովակ-
 ներ¹: Նրանք զրա-
 վում են խրձի ած-
 րող միջին մասը և
 շրջապատված են վոչ
 պարզ սանմանազմբած
 ելեմննաների գոտինվ,
 վորոնք կենդանի յեն
 և փռիադրում են պր-
 յասափիկ նյութեր: Այդ
 ելեմննաները իրանց
 կառուցվածքում վո-
 րոշ նմանություն են
 հայտնաբերում մազա-
 նոթների հետ և հա-
 մապատասխանում են
 առաջախրձերի փլոյե-
 մային, իսկ ջուր փռ-
 խադրող ելեմննաները
 կհամապատասխանեն
 քսիլենային: *Փռխադ-*
րող խրձից զեղի զուրս
գտնվում ե կենաք, իսկ
մակերևույթից ցողու-
նը պատված ե եղի-
դերմիսով: *Polytri-*



Նկ. 94. *Polytrichum juniperinum*.

1—արական բռյա: 2—անսերբիումերի հովաք, 3—
 անսերբիում և պարսֆիներ. 4—իզական բռյանք
 սպորովանիումերով:

¹ Այդ խոցովակները մասերի յեն բաժանված շատ բարակ միջնորդականերով, պատճեն բջիջներ են:


շհում-ի աերթները նույնակես բարդ կառուցվածք ունենաւ Նրանց գծա-
նշատարաձև թիթեղը համարյա իր ամրողջ յերկարությամբ բազմաչեղ-
տամի յեւ և ընդհանրապես կազմված և նույն ելեմննաներից, ինչ ելե-
մնաններից վոր կառուցված և ցողունը Տերեկի վերին կողմում գտնու-
վում են հատուկ ասիմիլատորներ, Դրանք բավականին բարձր թի-
թեղներ են, վորոնք իբրարից մոտ տարածությամբ գնում են տերեկի
յերկայնքով, Ասիմիլատորները կատարում են ածխածնի ասիմիլացիո-
յի աշխատանքը Polytrichum-ի մոտ սեռական բազմացման որդան-
ներն են անտերիդիումը և արքեգոնիումը Նրանք ամրողջ խրմ-
երով անդավորվում են ցողունի գաղաթին, մեկը մյուսից առանձ-
նացած, Անտերիդիումների հավաքը, կամ ինչպես հաճախ Նրանց
անվանում են «արական ծաղկիները», կըր, բացված ձև ունեն և շրջա-
պատված են կարմրավուն կամ դեղնավուն տերեններով, Նրանց կենա-
րունում գտնվում են անտերիդիումները, Անտերիդիումը իրենից ներ-
կայացնում և մի յերկարացած պարկ, վորը նստած և կարճ վատիկի
վրա (նկ. 94, 3), նա ունի միաշերտ պատ, իսկ ներսում նա կազմված
է չափազանց մանր, պարունակությամբ հարուստ, սպերմագենային
բջիջներից, զրանցից ամեն մեկն սկզբնավորում և մի սպերմատոզոյիդ,
Անտերիդիումների միջև գտնվում են տերենները և հատուկ պարաֆիդ-
ներ, այս վերջինները միաշար թելերի ձև ունեն և վերևում լայնա-
նալով փոքրիկ թիթեղիկի ձև են ստանում, Արքեգոնիումների հավա-
քը ժիշ և տարբերվում վեգետատիվ բողոքայից, վորովհետև Նրանց շրջ-
ապատառդ տերենները նույն մեծությունն ու ձևն ունեն, ինչ ձև ու
մեծություն վոր ունեն վեգետատիվ տերենները, Արքեգոնիումները կա-
ռուցված են նույն տիպով, ինչ տիպով վոր կառուցված են լյարգա-
մամուռների արքեգոնիումները, Նրանց մոտ աշքի յին ընկառում վորո-
վայնն ու յերկար պարանոցը, Վորովայինի մեջ տեղավորվում են ձվա-
րջիշն ու վորովայինի խողովակային բջիջը, իսկ պարանոցի մեջ մենք
գտնում ենք պարանոցային խողովակային բջիջների մի յերկար շարք՝
Նստած և արքեգոնիումները հաստ բազմաթիվ վոտիկի վրա Սեռա-
կան պրոցեսը կատարվում և անձրևային յեղանակի կամ ուժեղ ցողի
ժամանակի Արական ծաղկին վրա ընկած ջրի աղեղցության տակ ան-
տերիդիումներն իրենց գաղաթից բացվում են և սպերմատոզոյիդներն
անցնում են ջրի մեջ, նույն այդ ժամանակ իրենց գաղաթից բաց-
վում են նաև արքեգոնիումները, այդ պահին բոլոր խողովակային
բջիջները վեր են ածվում լորձունքի, վորը լեցնում և արքեգոնիում-
նի խողովակը, Սպերմատոզոյիդը, վորը պարուրաձև վոլորված
յերկարականի մարմին և, այդ լորձունքի միջով թափանցում և
արքեգոնիումի մեջ և հասնելով ձվարջիշն, ձուլվում և նրա հետ և
այդպիսով իրականացնում և բեղմնավորությունը Անտերիդիումների

զատարկվելուց հետո այն ցողունը, վորի վրա տեղափորված եր շարականին ծաղիկը, շաբանակում և իր աճումը, իսկ բնդմավորված ձվարջիցն սկսում է կիսու-
 մել և սկիզբն է տա-
 լիս սպորոգոնիումին։
 Աժրաղջովին ձևավոր-
 ված սպորոգոնիումը
 կտպված է յերկար
 վոամիկից ու նրա վրա
 նստած տուփիկից։ Վո-
 տիկն աճուր ներա-
 նում և ցողունի գա-
 ղաթի մեջ։ Տուփիկի
 վրա հաղցված է լայն
 ու մազատ դիմադիրը,
 վորը դարձացել է ար-
 քեզոնիումի վորովայ-
 նի պատից։ Խաքը առա-
 փիկն ունի լայնացած
 հիմք (*աղաթից*), սա-
 փոր և խփիկ, վորը
 նրան ծածկում է վե-
 րեկից։ Սափորի ներսով
 անցնում է մի սյու-
 նյակ, վորն սկսվում
 է ապոֆիզից և վերե-
 վում լայնանարով ա-
 ռաջացնում է այս-
 պիս կոչված եղին-
 քրազման՝ մի հյուս-
 վածք, վորը վերեկից
 ծածկում է սափորի
 խոռոչը նրանից վերև
 արդեն գտնվում և
 խուփը։ Սյունյակի
 և սափորի պատի միջև
 տեղափորվում է սպորանզիումը, վորը մի դլանաձև պարկ է և բոլոր կող-
 մերից շրջապատում է սյունյակը։ Նա բարակ թելիրով ամրանում է
 սյունյակին ու սափորի պատին։ Սպորանզիումի մեջ բացառապես ըս-
 պորներ են առաջանում։ Յերբ սպորիները հասունանում են, տուփիկը



Նկ. 95. *Cathartinea undulata*.

բացվում եւ Այդ ժամանակ նախ ընկնում եւ գլխաղիքը, իսկ այսուհետեւ առ խոսին ել հետ եւ թաշում Այդ զեպքում յերեսում եւ, զոր սափորի լայն բացվածքը ծածկված եւ նուրբ փառով—եպիֆրազմայով, իսկ նըս յեզրին նստած են մի շարք ատամիկներ, վորոնք իրենց ժայրերում կը ըրացված են—այդ այսպես կոչված ոչ եր իստումն եւ նըս ատամիկների ու եպիֆրազմայի միջն կան փոքրիկ անցքեր, վորոնց միջով սպորները կարող են դուրս ըրվել։ Պերիստոմը կարևոր դեր է խաղում



Նկ. 96. *Funaria hygrometrica*.

1—3 սպորի ծլումը. 4—պրոտոնեման և ցողովնիկի հիմքը.

սպորների ցրման գործում, Զորային յեղանակի ժամանակ նըս ատամիկները ծովում են գեղի դուրս, անցքերը լայնանում են և սպորները հեղուությամբ ըրվում են սափորից։ Խոնավ յեղանակին, ընդհակառակը, պերիստոմի ատամիկները ծովում են գեղի ներս, ննջում են զործում եպիֆրազմայի վրա և անցքերը փակվում են։ Այսպիսով՝ սպորները չեն կարող ըրվել։ Փակերով տուփիկի անցքերը, պերիստոմի ատամիկները չեն թողնում, զոր ջուրն անցնի տուփիկի խորշի մեջ և գրանով այնտեղ դանդող սպորներին պահպանում են նեխումից կամ անժամանակ ծլելուց։ Սպորները հեղառությամբ քամու միջոցով տարածվում են, և ընկնելով բարենպատ պայմանների մեջ, սկսում են ծլել Շլելով նրանք դառնում են յերկար և ճյուղավորված թելեր, վորոնք կազմված են մեկ շարք բջիջներից և հաճախ կանաչ թաղիքի նման ծածկում են հողի մակերեսույթը։ Նրանց մի մասը անցնում և հողի մեջ, Բջիջները պարունակում են քլորոֆիլլային հատիկներ։ Այդ թելերը կոչվում են պրոտոնեմա և մամուռների զարգացման ցիկլում

բնորոշ ստագիս յեն կազմում (Նկ. 96): Պրոտոնեմայի առանձին տեղերում բողոքված են առաջանում, վորոնցից աստիճանաբար տերևացողութային ընձյուղ և զարգանում, վորը հետագայում սեռական որդաններ և առաջացնում: Տերևացողութային ընձյուղը պրոտոնեմայի հետ միասին կազմում և սեռական սերունդը, կամ զամեռովիտը, իսկ սպորոֆիլաց, կամ անսեր սերունդը, դա սպորոգնիումն է: Այս յերկու սերունդները կանոնավոր կերպով հերթագայում են միմյանց, բայց սպորոֆիլը սերտ կազմված է, զամեռովիտի հետ և իր դրությամբ կախված է նրանից: Սպորոֆիլացին իր կորիզներում ունի 2-ը քրոմոզոմ, զամեռովիտը—ու ունի կազմվելու ժամանակ:

Տերևազոր մամուռները չափազանց ընդարձակ խումբ են, վորի մեջ հաշվում են մի քանի հազար սեռակի Այդ տեսակները տարածված են ամբողջ յերկրագնդի վրա և ապրում են ամենատարբեր պայմաններում: Իրենց մեծությամբ ու արտաքին տեսքով նրանք շատ բարձրագան են, բայց դրա հետ միասին նրանք պահպանում են իրենց բնորոշ կերպարանները, վորի շնորհիվ նրանց հեշտությամբ կարելի յն տարբերել ամեն մի ուրիշ բույսից (Նկ. 95): Նրանց բույսն ել կը որ ցողուն ունեն, վորը խիստ ծածկված է մանր տերևներով: Ցողունը սակավ է պարզ նեռում, մեծ մասամբ նույնազարդ է, յերենին ճյուղավորումը շատ բարձրանում է: Այդ ճյուղավորումը կարող է լինել և մոնոպոդիալ, և սիմպոդիալ չողի մեջ ցողունը արմատավորվում և սիդրոփիների միջոցով, վորոնք իրանցից ներկայացնում են յերկար, խիստ ճյուղավորված, միաշերտ թելիք: յերենին նրանք, ինչպես այդ տեսակում ենց *Polytrichum*-ի մաս, պարանաձև վորվելով: Մամուռների մեծությամբ տարածվում և բավականին ընդարձակ սահմաններում: Նրանցից ամենամանրերը մի քանի միլիմետր են, իսկ ամենախոշորները (*Polytrichaceae* ընտանիքից *Dawsonia*-ն) հասնում են 0,5 մ բարձրության: Տերևազոր մամուռների ներքին կառուցվածքը, չնայելով նրանց արտաքին մեծ բազմազանության, նեռում և պարզ: Խակական անոթախրձեր նրանց մոտ յերեք չեն կազմվում: Վերեւում մեր քննարկած ցանց մամուռը ամենաբարդ կառուցվածք ունեցող մամուռներից մեկն և և նրա փոխարրող խուրձը հայտաբերում և բարձրության ամենաբարձը աստիճանը, վորին կարող է համանել մամուռների փոխարրող սիստեմը: Մամուռների հօծ մեծամասնության մոտ փոխարրող խուրձը, վորը բռնում և ցողունի կենտրոնական մասը, կազմված և շատ նեղ, յերկարությամբ ձգված և բարձր պատեր ունեցող բջիջներից: Ցողունի ներքում մասը (կեղեց) կազմված է պարենքիմատիկ բջիջներից, վորոնք յեղբերին ավելի մոտ մեխանիկական բջիջների բնույթ են ստանում: Ցողունն իր մակերեսից պույթից պատճում և եպիդերմիսով: Շատ մամուռների մոտ փոխար-

բող խոռոք բոլորովմն չի կազմվում և ամբողջ ցողունը կազմված է միայն պարենքիմից: Մամուռների մեծամասնության մոտ տերենները ներկայացնում են միաշերտ թիթեղներ, վորոնց մեջ միայն միջին ջիւղում բջիջները մի քանի շարքով են դասավորվում: Տերեավոր մամուռների մոտ չափազանց զարգացած և վեցետափիվ ճանապարհով



Նկ. 97. Տերեավոր մամուռների բազմացման բաղրաջները:

1—*Orthotrichum Lyellii*. վերևում—տերես թելանման բազմացման բաղրաջներով. ներշեռում—տերեի մի մասը խիստ մեծացրած, վորի վրա յերեսում են բազմացման մատուց բաղրաջները. 2—4—*Tetraphis pellucida*. 2—3—բազմացման զավաթ. 4—բազմացման ուսունաձին բաղրաջներ. *Aulacomnium androgynum*, բույս, վորն իր ցողունի ծայրեն կեղծ վառիկ և կրում, բազմացման բաղրաջներով. աջից—ուսունաձին բազմացման բաղրաջներ տարրեր սառափաներում. 6—*Ulota phyllantha*, տերեի ծայրեն տառչացած բազմացման բաղրաջներ. 7—*Bryum erythrocarpum*. բազմացման բաղրաջներ, վորուց առաջացել են տերեի ծոցում. աջից—բազմացման բաղրաջներ պրոտանեմույի վրա:

բազմանալու ընդունակությունը: Այդ կատարվում է կամ սառերեկրյա ընձյուղների և դեմնի վրա փռված ճյուղների միջոցով, յերբ նրանց ծայրերն անելով դառնում են նոր անհաներ, կամ հատուկ բազմացման բաղրաջների միջոցով: Այս վերջիններս առաջանում են ցողունների և տերենների վրա, կամ ցողունների վրա յերեան յեկող հատուկ

աւեղերում Բազմացման բողոքիները չափազանց տարրեր ձևեր ունեն, ինչպես այդ յերեսում և մեջ բերգած նկարից (Նկ. 97).

Ընկնելով բարենպաստ պայմանների մեջ, նրանք ծլում, զանում են պրոտոնեմա, վորի վրա արդեն զուրս են դալիս տերևավոր ցողունները՝ վեգետատիվ բազմացման համար կարող և ծառայել նուև ինքը պրոտոնեման, յերբ նրա վրա մեծ թվով բաղրոջներ են առաջանում: Bryales-ների մոտ վորովեն սեռական որգաններ հանդիսանում են անտերիդիոնները և արքեզոնիոնները, վորը մենք նկարագրեցինք, յերբ խոսում երինք կախարդաց մամունի մասին: Մեծ մասամբ նրանք գասափորվում են ցողունների ծայրերին միմյանցից առանձին՝ առաջացնելով արտկան և իգական «ծաղիկներ»: Առան սերունդը այստեղ սպորոգանիոններ են և միշտ կազմված են վուրկից, և տուփիկից, իսկ վերևից ծածկված են զվարդով, բայց այս բոլոր բաղադրիչները մասերը տարրեր մամունների մոտ իրենց մեծությամբ ու ձևով չափազանց տարրեր են: Վուրկիկը յերկարությունը, զվարդի մեծությունը և մեր, սպորոգանիոնների զիրքը ցողունի վրա—այս բոլորը այնպիսի հատկանիշներ են, զորոնց սիստեմատիկական կարևոր նշանակություն ունեն մամունների գասափարզման հարցում: Նրանց կլասսիֆիկացիայի մեջ չափազանց կարևոր դեր է խաղում նուև պերիստոմը, այսինքն այն տառմիկները, զորոնց շրջապատճամ են սպորորի բացվածքը՝ խուլին ընկնելուց հետո. այս հարցում



Նկ. 98. *Sphagnum acutifolium*.

- 1—ըսույթ մի մասն անտերիզիոն է բարձրագ. 2—անտերիզիոն է բարձ. անտերիզիոններ (անտերիզիոնները և անտերիզիոնները են)
- 3—բացված անտերիզիոններ. 4—սպորոցիստիկ պատճեններ. 5—իգական նյութի զարդիկների մեջ կարգանդացը.

Նկատի յեն առնում պերիստոմի առամբների դասավորությունը, ձեզ
և կառուցվածքը:

Bryales կորց ուղարաքար սուրարատումնում և յերկու յերկարգի.

1. Cleistocarpeae—որմնց մաս ուղիքից վրա խոփ չի կազմում և սուրճներն
ողափում են սոփորի պատերի բանդվելու հատկանշությունը:

2. Stigocarpeae—որմնց մաս ուղիքից բացվում և խոփի ողափությունը և
ողովների ըրամց կանոնավորված և պերիստոմի միջոցով:

Մասնակների մեծամասնությունը պատկանում է այս կարգին:

Տաճային կամ սպիրալ մամուռների կարգ (Sphagnales):

Sphagnales—առրվային կամ սպիրալ մամուռների կարգը կաղ-
մըզած և միայն Sphagnaceae ընտանիքից իր միակ Sphagnum ցե-
ղով, վորոն ունի ամբողջ աշխարհում տարածված մի քանի տասնյակ



Նկ. 99. *Sphagnum acutifolium*.

1—աերեկ բջիջները. 2—աերեկ մի մասի լույ-
նական հատվածը. 3—ցաղանի լույնական
հատվածը:

Նկ. 100. *Sphagnum acutifolium*.

Սպիրալնիումի յերկայնուկի
հատվածը:

տեսակներ: Տորֆային մամուռները համատարած մամուռային ծածկույթ
են առաջացնում տորֆային ճահճների վրա և այդ տեղում զիսավոր
տորֆ առաջացնողներն են հանդիսանուում: *Sphagnum*-ը բավականին յեր-
կար, թույլ ցողուն ունի, վորը խիստ ճյուղավորված և և ծածկված և

մանր տերեններով (նկ. 98): Կարճ փոքրիկ ճյուղերը զգղղված դլխիկի նման խիտ կերպով հավաքված են ցողունի ծայրին: Ցերկար ճյուղերը կտիզում են նրա յերկայնքով: Sphagnum-ի կառուցվածքն ավելի պարզ է, քան տերեններով մամուռներինը (նկ. 99): Ցողունի մեջտեղը բանված և պարենքիմատիկ բջիջներով (միջուկ), վերջիններին շրջապատում և միխանիկական—պրոպենքիմատիկ բջիջների մի գոտի (ըընտափայացին դլան), զբանից այն կողմ գտնվում և կեղեց, վորը կազմված և 2—3 շերտ շտար լոյն թափանցիկ բջիջներից, վորոնք իրենց պատերի մեջ խոշոր ծակուտիներ ունեն: Դրանք մեռած բջիջներ են, վորոնք ընտական մինակում լցված ին ջրով: Sphagnum-ի տերենը միաշերտ կլոր-յեռական կյոււնաձև թիթեղ և առանց կենացընական ջղի: Նրան կազմող բջիջները յերկու տեսակի յին լինում: Մեկը՝ նեղ, յերկար քրորովիլլային հատիկներ պարունակող բջիջներ են, վորոնք իրենց ծայրերով միանալով ցանց են կազմում: Մյուսը՝ լայն, թափանցիկ բջիջներ են, վորոնք փակված են հիշված ցանցի կամերաներում, ունեն ծակուտիներ ու պարուրաձև հաստացումներ: Առաջիններն ասիւմիլացիան կատարող բջիջներ են, իսկ յերկորորդները—լցված են ջրով: Sphagnum-ի մեռական որդաններն անտերիդիումներ և արքեգոնիումներ են (նկ. 98): Նրանք դասավորվում են՝ առանձին փոքրիկ ճյուղերի վրա: Արական ճյուղերը աշքի յին ընկնում նրանով, վոր ծածկը ված են ավելի խոշոր ու գորշ կամ դեղնավուն գույն ունեցող տերեններով: Այդ տերենների միջին, ցողունի վրա, յերկար վոտիկների վրա նստած են անտերիդիումները: Վերջիններս, գնդաձև են, ծածկված են միաշերտ պատով և լցված են սպերմատին բջիջներով, վորոնք սկիզբ են տալիս պարուրաձև վորորված, յերկմարակավոր սպերմատոզուլզներին: Արքեգոնիումները տիպիկ կառուցվածք ունեն և տեղավորված են իդական ճյուղերի գագաթին: Հասունացած անտերիդիումները պատրազում են գագաթից մի քանի կատրներով, նրանցից զուրս յեկող սպերմատոզուլզները բեղմապորում են արքեգոնիումները: Բեղմապորված ձվարջից առաջանում և սպորոզոնիումը նա կազմված և գնդաձև տուփիկից ու կարճ վոտիկից, վորն ընկզմված և ցողունի գագաթի մեջ (նկ. 100): Տուփիկի ներսում գտնվում և գմբեթաձև սպորանդիումը, վորի տակ տեղավորվում և սյունյակը: Տուփիկի գագաթին կազմվում և խուփը: Դրսից սպորանդիումը պատված է զիսապրով, վորը, սակայն, շուտով պատռվում է: Ցերք սպորոզոնիումի ներսում սպորները հասունանում են, խուփը թաշում ընկնում և և նրանք հարավորություն են ստանում ցրվելու նույն այդ հասունացման ժամանակ ցողունի գագաթը, վորի մեջ ընկդմզված և սպորոզոնիումի գոտիկը, ուժեղ կերպով ձգվում, յերկարում և և այդպիսով դուրս և հանում տուփիկը տերենների միջից: Ցողունի այդ երկարացած տերենազուրկ մա-

ու կոչվում և կեղծ վատիկ։ Սպորից ստացվում է թիթեղաձև պրոտո-
նեմա, վորի վրա արդեն առաջանում են *Sphagnum*-ի տերևավոր ըն-
ձյուզները։ Խաքը *Sphagnum* դեռ փոքրիկ բույսն ու նրա պրոտոնե-
ման կազմում են այդ բույսի գամետոֆիտը։ Իսկ սպորոգոնիումը—
նրա սպորոֆիտը։

Մամուռների տարածումը յայ նկրագիտան

Տերևավոր մամուռները լայն շափերով տարածված են ամբողջ
յերկրագնդի վրա՝ արևադարձային յերկրներից սկսած մինչև բնելու-
յին յերկրները։ Նրանք բնելույին շրջանից բավականին այն կողմ են
անցնում՝ հասնելով համարյա մինչև բուռականության սահմանները։
Ճիշտ նույն ձևով նրանք շատ բարձրանում են սարերը—անտառային
սահմանից այն կողմը։ Բայց առավելապես բարեխառն ու ցուրտ գոտի-
ների տամուկ և խօնավ վայրերի բնակիչներ են հանդիսանում։ արև-
վագարձային շրջաններում նրանք գլխավորապես աճում են լեռնա-
յին յերկրներում։ Իրենց մասսայական բնակավայրերում նրանք հա-
ճախ աչքի ընկնող դեր են կտառարում բուսականության մեջ՝ հաղոր-
դերով նրան բնորոշ կերպարանք։ Այսպես, տունդրայում, լեռնային
տամուկ լանջերում և այլն, նրանք համատարած։ ծածկույթ են
ստաջացնում, վորը կազմված է խիտ աճող մամուռի ցողուն-
ներից։ Դրանց միջև ցըված են լինում ծագկավոր բույսերի ներ-
կայացուցիչներ։ Մեր հյուսիսային անտառներում նույնպես նրանք
հաճախ համատարած կերպով ծածկում են ամբողջ հողը, ինչպես, ո-
րինակ, սռնու անտառներում (Hypnum Schraeberi, Polytrichum),
կամ յեղևնու անտառներում (Hypnum-ի տեսակները)։ Հենց արդարեղ
նրանք քարաքումների հետ միասին ծածկում են ծառերի բները։ Ա-
ռանձնապես մեծ դեր են կտառարում տերևավոր մամուռները մամուռ
հաճիմներում, վորտեղ նրանք համատարած դորզ են կազմում և գրա-
նով պայմանավորվում են ճանճի ամրող յերանգավորում։ Այսպես
կոչված վերին կամ սփոյնումային ճանճները, վորոնք ընկած են
ջրաբաժան գծերի վրա, առաջացնում են տորֆային մամուռների—
Sphagnum-ի զանազան տեսակները։ Նրանք պահանջում են, փափուկ,
ողերով աղքատ, ջուր, թրանց հետ միասին առավելապես զուղձերի
(մամուռատ հողակույցների) վրա աճում են *Polytrichum*-ի տեսակ-
ներ։ Տորֆային մամուռներն հանդիսանում են այսուեղ գլխավոր տորֆ
ստաջացնողներ։ Տորֆն առաջանում՝ զլիսավորապես նրանց ցածրի
մասերի հաշվին, վորոնք մամուռների աճման զուգընթաց, առա-
ճանաբար մեռնում են։ Թետանօքիաների ցածրադիր ճանճնե-
րում *Sphagnum*-ի դերն ստանձնում են կանաչ մամուռները, վո-
րոնք նույնպես այսուեղ համատարած մամուռային ծածկույթ են

տախացնում: Դրանք Հյուսուս, *Aulacomnium* և ուրիշ տեսակներ են և իրենց զարգացման համար արդեն պահանջում են կոչա, կացիումով հարուստ ջուր: Մեծ քանակությամբ մածուռներ պատճեռում են խոնավ ճաճճային մարգագետիններում (*Mnium, Clitocyrium*) և նույնիսկ տափաստաններում (*Thuidium*). Մածուռների թվում կան նաև խսկական ջրային ձևեր, վորոնք ապրում են հոսող (*Fontinalis* և ուրիշներ) կամ կանգնած ջրերում (*Hypnum*-ի տեսակներ), Վերջապես, նաև չոր տեղերում գոյություն ունի մածուռների բազմական հարուստ ֆլորա, որինակ՝ լեռներում քարերի և ժայռերի վրա ապրում և *Rhaecomitrion* և ուրիշները. մեզ մոտ չոր ավազների վրա բնակվում է *Polytrichum piliferum*-ը:

Պափլոֆիտների դասը (Psilophyta)

Այս դասին, վորոն ընդդրկում և միայն *Psilophytales* կարգը, պատկանում են ցամաքային բարձրագույն բույսերի ամենանախնական ու ամենապարզ կառուցվածք ունեցող ներկայացուցիչները. Դրանք հանդած ձևեր են, վորոնք հանգիպում են վերին սիլվուրում և ցածրի ու միջին գեղվուում: *Psilophytales*-ները արմատ չունեն, իսկ մեծ մասամբ չունեն նաև տերևներ. Դրանք կազմված են դիքոտոմիկ ճյուղավորումներ ունեցող ցողունից, վորը մի քանի ներկայացուցիչների մոտ ծածկը ված և մանր խոզանազած տերևներով: Այս կարգի գլխավոր ցեղերն են՝ Ռիմիա-ն (*Rhynia*), հորնեա-ն (*Hornea*), պափլոֆիտներ-ը (*Psilophyton*) և աստերօքիլոն-ը (*Asteroxylon*):

Ռիմիան—*Rhynia* (հատկապես R. major, նկ. 101) ներկայացնում եր մի փոքրիկ բույս, մոտ 30 տմ. բարձրությամբ և 5 մմ հաստությամբ, վորը կազմված եր ստորերկրյա հորիզոնական կոնդարմատից, վորից զեղողի ներքև զնում ելին ոփողիզները, իսկ զեղողի վեր՝ վերերկրյա ընձյուղի դիքոտոմիկ ճյուղավորումները նա վոչ արմատ և ունեցել, վոչ ել տերևները: Մյուս տեսակը, R. Gwynne-Vaughani, աչքի յեր ընկնում իր իփոքը չափերով:

Այսպիսով, *Rhynia*-ի մորֆոլոգիական մասնառումը շատ պարզ է, վոչ պակաս պարզ և նաև նրա անառողիական կառուցվածքը (նկ. 102): Ծովանի կենտրոնում զանգում և մի անոթախուրը. նա կազմված ե կուռ և կենտրոնում հավաքված քսիլեմայից, վորին բոլոր կողմերից շրջապատում և ֆլուեման. այնուհետև գալիս և պարենքիմային կեղեցը: Դըրսից ամրող ցողունը ծածկված ե եռիզերմիխով, վորի մեջ զանգում են ներձանցքները: Սպորանզիտները տեղավորված են ցողունի դիքոտոմիկ ճյուղավորումների ծայրերին: Նրանք լեցված են սպորներով:

Հորնեա-ն—*Hornea* (հատկապես N. Lignieri), ինչպես և *Rhynia*-ն, —մանր բույս է, վորը ոխիայի հետ միասին անում եր ճաճճային,

առցիալին՝ վայրերում և առ ունի կարճ և մի քիչ փշված կոճղարմատ, վորից դեպի վեր զնում են դիքտոսմիկ ճյուղավորված ընձյուղները՝ առանց տերենի և ծայրին սպորանզիտներով, և առմատներ չունի,

իսկ կոճղարմատների վրա գանգուստ են միայն սիզոյիզները: Ներքին կառուցվածքն ընդհանուր առմամբ նույն է, ինչ վոր Rhynia-ի մաս: Սպորանզիտներ աչքի յե ընկնում նրանով, վոր նրա մեջ և մասն ցողունի վիզեատիվ հյուսվածքը, ինկ ինքը սպորային պարկը գմբեթի ձև ունի, ինչպես, որմանկայի սփազնումի սպորանզիտներ:

Ներջապես, քննարկվող կարգի յերրորդ ներկայացուցիչը—տաեւոսիլոնը (Asteroxylon Mackiei) նախորդներից տարրերգում և և ավելի խոշոր չափերով, ու ավելի բարդ կառուցվածքով (նկ. 103), և առ ունեցել է վիրերկրյա ուղիղ ընձյուղներ, վորոնք անել են հորիզոնական կոճղարմատից: Նրանց վրա գարզացել են կողային ճյուղերը, վորոնք իրենց ներթին դիխոսումիկ ճյուղավորումներ են տըվել: Գիշավոր ճյուղների դիքտոսմիան սպարզ չե արտահայտված: Վերերկրյա ընձյուղները խիս պատված են մանր, խողամագածե տերեններով: Խակական արմատներ չունի, առաջանում են միայն արմատանման նուրբ ճյուղեր, վորոնք կոճղարմատից գնում են զեղողի հողի խորքը: Ցողունի կենտրոնական մասը բանված և փախազրող խուրձով, վորը կառուցված և կոնցենտրիկ տիպով: Նրա մեջտեղում տեղավորված ե



նկ. 101.


1—*Rhynia major*. 2—*Rhynia Gwynne-Vaughani*. 3—*Hornea Lignata*.

քսիթեման, վորն իր համակածքում չորսթևա: Հաստղի ձև ունի. այդ թեփերի միջն գանգում և ֆլուման, նա եւ դրախտ շրջապատում և ամբողջ խուրձը Այնուհետև գալիս է կեղկը: Ցողունը դրսից պատված է եպիդերմիսով, վորի վրա, ինչպես նաև տերենների վրա, գտնվում են հերձացքները: Սպորանզիտների զրությունը մնում է չպարզված: ըստ

յերեսույթին, նրանք տեղավորված են յեղել հատուկ պաղաքեր նյու-
ղերի ծայրերին:

Գևամամամուռների դասը (Lycopsidea):

Այս դասը բնորոշվում է այսպես կոչված միկրոֆիլիայով (ման-
րատերևություն). Նրա ներկայացուցիչներն ունեն լավ զարգացած
ցողուններ, վորոնք պատված են մանր, խիտ դասավորված տերևնե-
րով. Lycopsidea-ն ստորաբաժանվում է յերեք կարգի՝ Lycopodiales,
Isoetales և Psilotales:



Նկ. 102. Rhynia major. ցողունի ընդլայնուկան հասվածքը:

Գևամամամուռների կարգ (Lycopodiales):

Այս կարգին պատկանում են խոռանման կամ ծառակերպ բույսեր,
վորոնք ունեն մանր տերևներով ծածկված ու լավ զարգացած ցողուն-
ներ. Սովորներն առաջանում են սպորանցիումների մեջ, վորոնք նըս-
տած են կամ սպորոֆիլների վերին կողմում, կամ անմիջականորեն

սպորոֆիլից վերև ամբողջում են առանցքքին Սպորներն ունեն հավասար մեծություն (իգոսպորային կամ հավասարասպոր զետնամամուռներ) կամ տարրեր մեծություն (հետերոսպորայիններ կամ տարրասպորայիններ): Հավասարասպորայինների զամետովիտը ստորերկրյա յև և պարարաձև և ունենում են չափաղանց բազմազան ձևերությունների զամետովիտն ուժեղ կերպով գեղի յետ և զարդացած: Այս կարգին են դասվում չորս ընտանիք՝ 1) *Lycopodiaceae*, 2) *Selaginellaceae*, 3) *Lepidodendraceae* և 4) *Sigillariaceae*: Վերջին յերկուամ հանգած են և հայտնի յեն միայն բարձր վեճակում:

Դեմքամուռների ընտանիք (*Lycopodiaceae*): Այս ընտանիքի համար վորպիս որինակ կարող ե ծառայել մեր անտառները: Առվորական զետնամամուռը (*Lycopodium clavatum*) (նկ. 104): Նա ունի յերկու, գետնատարած, դիմուռմիկ ճյուղավորված ցողունը ծողունից դեպի վեր զնում են կարճ ճյուղեր, վորոնք նույնապիս դիմուռմիկ ճյուղավորումներ են առաջիւ թե ցողունը և թե ճյուղերը - խիտ ծածկված են մանր, հատարակ, գծակերպ կամ գծահերթական տերմներով: Գետնին փափած ցողունից ցածրի կողմից հաղի մեջ են մտնում նուրբ արմատները: Մի քանի ճյուղերի գագաթներին տեղավորվում են



Նկ. 103. *Asteroxylon Mackiei*.

սպորակիր հասկիկներ: Նրանք սովորաբար յերկու-յերկու տեղավորվում են հատուկ վորիկների վրա, վորոնք ներկայացնում են ցողունի յերկարացած մաս և ծածկված են յետ զարդացած:

դեղնավուն տերևներով: Գետնամածուռի ցողունիք կենսաբունության մեջ բազուր անոթախուրը՝ նաև կառուցված և կօնցընտրիկ տիպով, այսինքն, նրա մեջ քսիլինան բոլոր կողմերից շրջապատված և ֆլուեմայով, բայց ինքը քսիլինան կարառված և առանձին ժամանակաձև մասների, վորոնց արանձնեների մեջ մտնում և ֆլուեման Անոթախուրը՝ շրջապատված և պերիցիկլով ու ենդոդերմիսով: Մրձից հետո զալիս և կեղուը, վորի բջիջները խրձի մոտ և պերիֆերիային կից ձեմանիկական բջիջների ընույթի են ստանում: Դրսից ցողունը պատված և եպիֆերմիսով: Բաղմանում և *Lycopodium* և լավացում-ը սպորների միջոցով, վորոնք առաջանում են սպորանգիումների մեջ: Իսկ վերջիններս առաջանաւմ են սպորատերիկիների վերին կողմում, վորոնք հավաքվել են հատուկ սպորակիր հասկիկների մեջ: Հասկիկները սովորաբար յերկու-յերկու տեղավորվում են ուղղահայաց նյութերի դադարիչն: Հասկիկի մեջտեղից անցնում և առանցքը, վորի վրա և ամբանում են սպորատերիկիները: Առանձին սպորատերիկից ներքեւում խիստ լայնացած ե, իսկ վերևում մի անգամից նեղանալով սուր հերյանաձև մաս և զանում: Սպորատերիկից լայնացած մասում, նրա վերին կողմի վրա, կարճիկ վատիկի վրա նստած և խոչոր բողոքաձև սպորանզիումը Սպորանզիումները լցված են սպորներով: Բոլոր սպորները հավաքար մեծություն ունեն: Նրանք քառանիստ ձև ունեն և պատված են հաստ, ցանցավոր թաղանթով: Մեր նկարագրած *Lycopodium clavatum*-ը ներկայացնում է անսեռ սերունդը կամ սպորոֆիլը, վորովհետեւ տալիս և անսեռ բազմացման որդաններ—սպորանզիումներ, վորոնք սպորներ, այսինքն՝ անսեռ բազմացման տարրեր են կրում: Սպորից, հենց վոր նաև պատված սպորանզիումի միջից ցըլում և ընկնում և բարենպաստ պայմանների մեջ, ծրում և զանտոփիս: Գամետոֆիտը, կամ *Lycopodium clavatum*-ի սկզբանաձիլը, ստորերկրյա կյանք և վարում: Նա մի փոքրիկ ($2\text{--}3$ մմ տրամագծով) անդույն հողաձև մարմին ե, բավականին բարդ ներքին կառուցվածքով: Նրա ներքենի մակերեսից դուրս են զալիս բազմաթիվ սիզոյիդներ, գամետոֆիտի ներսում նրանց միջից ներանում են սնկի հիճեր և տեղավորվելով սնկի բջիջների մեջ: Նրա հետ սիմբրիոզ են առաջացնում և առաջիս են ենդոտրոֆ միկորիզայի նման մի բան (նկ. 97): Սկզբանաձիլի վերեկի կողմում առաջանում են սեռական որդանները—անտորերկուումներն ու արքեգոնիումները: Առաջնները գրավում են նրա կենսաբանական մասը, իսկ մյուսները՝ զասավորվում են նրա յեղբերի մոտ: Անտորերկուումը ներկայացնում է սկզբանաձիլի մարմին մեջ շնկկաված ձգաձև մի մարմին: Նա կառուցված և մանր սպերմագինային բջիջներից և վերեկից սահմանադրված և բջիջների մի շերտով: Սպերմագինը բջիջներից առաջանում են փոքրիկ ձգաձև սպերմատո-

զոյլիդները, վորոնցցից յուրաքանչյուրը յերկու մտրակ ունին: Արքեզունիունները այստեղ նույնպիսի կառուցգաճք ունեն, ինչպիսի կառուցգաճք նրանք ունեն մասունակերի մոտ: Նրանք իբրև փորիկով ընկդժված են սկզբնաժիշտ հյուսվածքի մեջ, իսկ յերկար պարանոցով դուրս են գալիս: Փորիկով գտնվում են ձվարջիշն ու փորիկի խողովակածն ըջիջը: Նրանց վրա պարանոցի մեջ գտասվորված են պարանոցի խողովակածն ըջիջները, Հասունացման ժամանակ արքեզունիումը բացվում է իր գոտոթից: այդ ժամանակ փո-



24. 104. *Lycopodium clavatum*.

1—բայց առ ապրութեալ Հասկինեարավ. 2—ապրութեալ իր ապրանգութեավ. 3—ապրութեալ
4—ապրութեալ. 5—անասերիդիս. 6. ապրանգութեալ. 7—8—արքակոնյակութեալ.

ըշկի ու պարանոցի խողովակածեմ քշիջնարը կորցնում են իրենց ձեւվերը և սպերմատոզոյիդը հնարավորություն և ստանում թափանցելու ձվարջիկ մեջ։ Սպերմատոզոյիդը, ձուրվելով՝ ձվարջիկ հետ, բեղմավորում և նրանու թերթմավորված ձվարջիջն անօմիջապես մկսում և կիսվել և սկիզբն և տալիս սաղմին։ Վերջինս աճեցրվ թափանցում և սկզբնաշելիք հյուսվածքի մեջ։ Սարթն աստիճանաբար ազատվում և մկզրնածից, իսկ այսուհետեւ նաև հողի տակից դուրս գալով և անելով, տալիս

և *L. clavatum* բույսը (նկ. 104, 9). Խնձովես այդ յերեսում և վերընում
մեջ բերված նկարագրությունից, *L. clavatum*-ի մոտ, նրա կենսական
ցիկլում, ինչպես նաև մամուռների մոտ, նկատվում և սերունդների
խիստ կանոնավոր հերթափոխություն, այսինքն, անսեռ սերունդը փո-
խարինվում և սեռական սերնդով, սեռականն՝ անսեռով և այսպես շա-
րունակաբար Բայց, ի տարրերություն մամուռների, նրա մոտ զերիշ-
խող սերունդը վոչ թե սեռականն է, այլ անսեռ սերունդն է Այս, ին-
չին վոր մենք գետնամամուռ ենք ասում, զա խիստապես նրա անսեռ
սերունդն է, իսկ նրա սեռական սերունդը դարձել և ստորերկրյա մի
ջաշխն սկզբնածիլ *Lycopodiace-*ի սերունդների հերթափոխության այս
յուրահատկությունը բնորոշ գիծ և վոչ միայն *Lycopsida*-ի, այլև
Sphenopsida-ի, *Pteropsida*-ի և *Gymnospermae*-ի համար:

Lycopodium ցեղն ունի մոտ 100 տեսակ, վորոնք տարած-
վածնեն ամբողջ յերկրագնդի վրա: Նրենց մեծությամբ ու արտաքին
տեսքով նրանք բավականին խիստ փոփոխությունների յին յենթերկ-
վում, բայց միշտ պահպանում են իրենց բնորոշ կերպարանքը, վորոնք
նրանց տայիս են այն մանր տերևները, վորոնք խիտ զասավորված
են սովորաբար զիթոսումիկ ճյուղագործական ունեցող ընձյուղների
վրա: Գետնամամուռները բազմանում են սպորներով, վորոնք զարգա-
նում են սպորանցիումների մեջ: Սպորոֆիլները, վորոնք իրենց վրա
կրում են սպորանցիումներ, հավաքված են հասկիկների մեջ, բայց
իրենք սպորոֆիլները մի քանի գետնամամուռների մոտ (որինակ՝
L. selago) վեգետատիվ տերևներից չեն տարբերվում, այն ինչ ուրիշ-
ների մոտ նրանց միջև յեզած տարբերությունը բավականին ուժեղ և
արտահայտված (*L. clavatum* և ուրիշներ): Գետնամամուռների մոտ
խիստ փոփոխվում և սեռական սերունդը: Մի քանի տեսակների մոտ
(*L. cernuum*) սկզբնածիլերն ապրում են հողի մակերևույթին, խրվե-
լով նրա մեջ միայն իր ցածրի մասով, դրանք պալարաձև են, իրենց
զարգացին կրում են կանաչ տերևաձև յերշտաներ: Ուրիշ գետնամա-
մուռների մոտ սկզբնածիլերն ընդունում են վորդի անկանոն (*L. Selago*): Կամ թերժնման ձև (*L. Phlegmaria*) և ապրում են հողի տակ:
Նրանք անգույն են և սովորաբար սնկերի հետ սիմբիոզի մեջ են
մտնում: Վերջապես, յերշորգների մոտ զամեռովիտաց հողածեւ և
(*L. clavatum*) կամ բողկաձև (*L. complanatum*), ստորերկրյա կյանք և
արում, անգույն ե և բավականին բարդ ներքին դիմերինցիացիավ
յե հայտնաբերում, վորը կախված ե նրա սնկերի հետ ունեցած սիմ-
բիոզից (նկ. 105): Գետնամամուռների սկզբնածիլերը միշտ յերկառն
են, անտերիդիումները և արքեզոնիումները բավականին քանակու-
թյամբ են առաջանում, Սպորների ծրումը, սկզբնածիլի ու սաղմի

զարգացումը տևում էն մի քանի տարի (մինչև 10—12 տարի):


Սելազիննելլաների ընտանիքը (Selaginellaceae). Այս ընտանիքի բնուրոշ հատկանիշն այն է, վոր նա առաջացնում է յերկու տեսակ ըստ պորներ՝ մանր սպորներ կամ միկրոսպորներ և խոշոր սպորներ — մակրոսպորներ: Միկրոսպորները ծլելով սկիզբ են ալիքա արական սկզբանածիլերին, վորոնք միայն անտերիդիումներ են կրում. մակրոսպորներից առաջանում են խղական սկզբանածիլերը, վորոնք արքեզոնիումներներ են կրում: Թե մեկ և թե մյուս սկզբանածիլերն իրենց վեգետատիվ մասում խիստ յետ են զարգացած: Այս ընտանիքին պատկանում է միայն մի ցեղ՝ սելազիննելլան (Selaginella)՝ բազմաթիվ տեսակներով (մոտ 500), *Selaginella-n* ինը խոտաբույսեր են, վորոնք վոչ այնքան ըարձր են (մինչև 0,5 մ), ուժեղ, շենքամամբ զիցուումիկ, ճյուղավորված թփերի տեսք ունեն: Ճյուղերը ծածկված են մանր և խիստ դասավորված տերմներով: Մի քանի տեսակների մոտ նըրանք տարբերվում են իրենց մեծությամբ և ձևով (այսպես կոչված հետերոֆիլիան): Այսպիսի դեպքերում ճյուղերի վրա կարելի յէ տարբերել յերկու շարք մանր տերմներ և յերկու շարք — խոշոր: Հողին *Selaginella-n* ամրանում և նույրը արժանաբուվ: Բացի դրանից, նրա ճյուղերի վրա առաջանում են հատուկ որդաններ, այսպիս կոչված ոխզմաներ (արժատարերներ): Համեմով գետնին, ոիզոֆորներն իրենց ծայրերից զարգա-



Նկ. 105.

1—*Lycopodium complanatum*, սկլերոտիլիք յերկուշական հատվածներով. 2—3 *Lyc. Selago*, ողորների ծլումը:

շնում են և նողոքնային կերպով հազելյալ արմատներ՝ սեխանգինելլա-
 ների համար նորմալ կառուցվածքով։ Ռիգոֆորները սովորաբար ո-
 ռաջանում են ցողունի ճյուղավորութենքից ներքեւ և ունեն յերկար ու-
 րաբակ արմատների տեսք, բայց նրանք եկզոպնն ծագում ունեն և ի-
 տարբերություն իսկական արմատների, չունեն արմատապատճեն։ Ցո-
 ղունի կենարոնով անցնում ե 1—2 խուրձ (մի քանի տեսակների մաս-
 մնում և մի քանի խուրձ), խրձերը համեմատաբար թույլ են զարգա-
 ցած, իսկ ցողունի զիստավոր մասայի տառաջացնողը կեղեային պարհե-
 քիմարիկ ճյուղաներն եւ երձերը կառուցված են ըստ կանցնարիկ-
 տիպի, ցոխեման նրանց մեջ շրջապատված է փլունայով, և յուրաքան-
 չյուր խուրձ շրջապատված է ոգային խորշով, վորի միջնի խրձից դե-
 ղի կեղեւ գնում են
 կարճ թելքը. դրան-
 ցով ել խուրձը կարո-
 ղանում և պահվել այդ
 խորշում։ Տերեկի բնո-
 րոշ տառանձնահատկու-
 թյունն այն ե, վոր
 շրջիները վոչ թե սո-
 վորական թլորոֆիլլա-
 յին հատիկներ են
 պարունակում, այլ
 թերթավոր քրոմա-
 տոֆորներ։ Selaginell-
 իա-ն բազմանում և ցո-
 պորանգիութեների ներ-
 սում առաջացող ցո-
 պորների միջոցով. իսկ
 ոպորանգիութեները հա-
 վագվելով սպորակիր
 հատիկներ են առա-
 ջացնում, վորոնք նատած են ճյուղերի ծայրերին։ Հատկիկի միջանդում
 գտնվում ե առանցքը, վորի վրա նատած են սպորոֆիլլները (նկ. 106),
 Յուրաքանչյուր սպորոֆիլլ կրում ե մեկական սպորանգիում, վորն ամ-
 բանում է սպորոֆիլլի և առանցքի միջև անկյունում։ Սպորանգիումից
 վերև սպորոֆիլլի վրա տեղավորված է այսպես կոչված լիզվակը, վորը
 փոքրիկ յեռանկյունի թիթեղի տեսք ունի։ Անգվակը Selaginella-ի հա-
 մար մի բնորոշ կազմություն ե, իսկ նրա դերը գնում ե չպարզ-
 գած։ Խնչպես արգին ցույց ե արված, Selaginella-ն յերկու սեփ ըս-
 տորներ ե առաջացնում. դրան համապատասխան կան յերկու




Նկ. 106. Selaginella.

- 1—Selaginella-ի շնչանուր մեջը. 2—հանգիկը.
 3—միկրոսպորանգիում. 4—մակրոսպորանգիում. 5—
 ծած մակրոսպորին կափան սկզբնաժիշտով.

ջացնում, վորոնք նատած են ճյուղերի ծայրերին։ Հատկիկի միջանդում
 գտնվում ե առանցքը, վորի վրա նատած են սպորոֆիլլները (նկ. 106),
 Յուրաքանչյուր սպորոֆիլլ կրում ե մեկական սպորանգիում, վորն ամ-
 բանում է սպորոֆիլլի և առանցքի միջև անկյունում։ Սպորանգիումից
 վերև սպորոֆիլլի վրա տեղավորված է այսպես կոչված լիզվակը, վորը
 փոքրիկ յեռանկյունի թիթեղի տեսք ունի։ Անգվակը Selaginella-ի հա-
 մար մի բնորոշ կազմություն ե, իսկ նրա դերը գնում ե չպարզ-
 գած։ Խնչպես արգին ցույց ե արված, Selaginella-ն յերկու սեփ ըս-
 տորներ ե առաջացնում. դրան համապատասխան կան յերկու

ապորանգիռամեներ — միկրոսպորանգիռամեներ և մակրոսպորանգիռամեներ: Միկրոսպորանգիռամեների մեջ մեծ քանակությամբ զարդանում են մանր միկրոսպորներ: Մակրոսպորանգիռամեների մեջ տաշանում ե միայն չորս հատ շատ խոշոր մակրոսպոր, վորոնք պատված են փշավոր թաղանթներով: Սպորները, վորոնք ցրվում են, սպորանգիռամեների բացվելուց հետո, ընկնելով բարենպաստ պայմանների մեջ, ծլում են՝ սկիզբ տալով սկզբնածիլերին: Մրած միկրոսպորը նըրկայացված է 107-րդ նկարում: Նրա կենարոնում տեղափորվում է մանր սպերմազին բջիջների մի խումբ, վորոնք ցրջապատված են մի քանի վեգետատիվ բջիջներով, և մի փոքրիկ վեգետատիվ բջիջ ուսանձնանում է սպորի հիմքից: Այդ, այսպես կոչված, սիզոփուլ բջիջն է, արական սկզբնածիլի միակ վեգետատիվ բջիջը: Իսկ սպերմազին բջիջները և նրանց ցրջապատող վեգետատիվ բջիջները պետք ե համարենք անտերիպիում: Այսպիսով, *Selaginella*-ի մոտ արական սկզբնածիլը ուժեղ կերպով ռեզուլցիայի յի յնթարկվել: Դորձնականում ամբողջ արական սերունդը նըրկայացված է մի անտերիպիում:



Նկ. 107. *Selaginella*.

1 և 2—ծլում միկրոսպոր. 3—սպերմատոզուիչներ:

Սպերմազին բջիջներից առաջ են գալիք յերկմարտկավոր ըստ սպերմատոզուիչներ:

Մակրոսպորներից գարզանում են իգաւկան սկզբնածիլեր: Նըրածնը առաջանում են մակրոսպորի թաղանթը և մասամբ դուրս են ներսում, ընդունում մակրոսպորի

ծլման ժամանակ նրա կորիզը յեռանդում կերպով կիսվելով, սկզբնավորում է մի մանրարջիշ հյուսվածք, վորը լցնում և մակրոսպորի ամբողջ խորշը չենց այդ հյուսվածքը ել իգաւկան սկզբնածիլին եւ վերջինս բավականին մեծանալով, յեռանկյունի նեղվածքի ձևով պատռում և միկրոսպորի թաղանթը և մասամբ դուրս ե գալիք նրա միջից, բայց նրան յերբեք չի լքում (Նկ. 106, 5): Այստեղ սկզբնածիլի վրա զարգանում են արքեգորնիումները. վերջիններս սովորական կառուցվածք ունեն և ընկզմված են սկզբնածիլի հյուսվածքի մեջ: Լողալով արքեգորնիումներին մոտեցող սպերմատոզուիչները բեղմանվորում են նրանց և բեղմանվորված ձվարջիշից առաջանում և սաղմբ:


Selaginella-ի զարգացման ցիկլի վերև բերված նկարագրությունից յերևում ե, վոր նրան մոտ, ինչպես նաև գետնամամունքների մոտ, դոյլություն ունի սպորոֆիլ և զամնառոֆիլ սերունդների կանոնավոր

Հերթափոխությունն Բայց այստեղ նա զուգորդվում է սեռական իրաւունքինը և նույնագիտացնելով՝ առաջանուում են միկրոսպորներ, վորոնք սկզբնավորում են արական անտերիորիալ սկզբնածիլեր, և մակրոսպորներ, վորոնք սկզբնավորում են իրական արգեգոնիալ սկզբնածիլերը՝ *Selaginella*-ի յիշերորդ յուրահատկությունն այն և, վոր թե մեկ, և թե մյուս սկզբնածիլերը շատ ուժեղ կերպով ռեցուլցիայի յեն յենթարկվելու Սեռական սեռնորդի ռեզուլցիայի այս յերեսութը,



Նկ. 108. Lepidodendron.

Ընդհանուր տեսքը:



Նկ. 109. Lepidodendron.

Կեղակ մակերեսը թից:

վորը կտպված է տարասպորության հետ, ներկայացնում է բարձր բույսերի և վույուցիայի հիմնական աննոդենցը և Pteridophyta—Gymnospermae խմբերի մեջ մենք մի քանի անգամ կհանգիստնք նրան:

Լեպիդոդենդրոնայինների ընտանիք (Lepidodendraceae). Այս ընտանիքին պատկանում են միայն մասփայտային չքացած բույսեր, վորոնք առաջանում ենին պալեոզոյայի ժամանակ, զիխավորապես քարածխային գորաշրջանում: Նրա պլիտավոր ցեղը կազմում են լեպիդոդենդրոնները (Lepidodendron) (Նկ. 108): Լեպիդոդենդրոնները շատ խոշոր ծա-

սեր են յեղել՝ 20—30մ բարձրությամբ և մինչև 2մ հաստությամբ։ Նրանք ունեցել են բարձր և ուղիղ բռն։ Վորը մեծ մասամբ դիցուառիկ ճյուղավորութիւններ և տվիր նրա ճյուղերը ծածկված են յեղելնեղ հերյունունշատաբան տերեններով, վորոնք նաև են խիստ պարզուրի ձևով։ Ճյուղերի անման և նոր տերենների առաջացման գուղընթաց ավելի հին մասերի տերենները մեռնում ենին և թափվում, իսկ նրանց հիմքերը մնում ենին ցողունի վրա՝ այսպես կոչված տերեային բարձիկների ձևով։ տերեային բարձիկներն ունեցել են կանոնավոր շեղանկյունուն ձև և կիս մոտ են յեղել միմյանց՝ բաժանված լինելով միմյանցից մի նեղ ակոսիկով։ Բնի ու ճյուղերի հաստացման գուղընթաց անելին ու մեծանալիս են յեղել տերեային բարձիկները՝ առաջացնելով նրանց վրա կարծեց թիփուկավոր զբան (նկ. 110)։ Դրա շնորհիվ լիպիդոգենոգոնի մակերևույթն առացել



Նկ. 110. *Stigmaria sicoides*.

բնորոշ, կանոնավոր գծված տեսք։ Լիպիդոգենոգոնների բներն ամբանալիս են յեղել գետնի մեջ հաստուկ ստորերկրյա որգանների, այսպես կոչված ու իդ մարիս և ը ի միջոցով (նկ. 110)։ Նրանք ունեցել են հաստ ու զիքուամիկ ճյուղավորված արմատների ձև։ Իրենց բնույթով զբանք պիզոֆորներ են յեղել, այսինքն այնպիսի սիզոֆորներ, ինչպիսին վերը նկարագրեցինք Selaginella-ի համար, և նրանցից արգեն դուրս եյին գալիս ճյուղավորում չափող յերկար ու բարակ իսկական արմատները։ Սակամարիանների հին մասերի վրա արմատները մեռնում ենին և նրանց ամբացման տեղերում մնում ենին կլոր զրոշմներ։ Լիպիդոգենոգոնների անատոմիական կառուցվածքը բարդ և յեղել։ Նրանք ունե-

շել են շատ ուժեղ զարգացած միջուկ, վորը շրջապատված է՝ յեղել քսիլինմայի համեմատաբար վոչ այնքան լայն ողակով, քսիլինմայից այն կողմ գտնվում եր ֆլուեման ու հաստ կեղևը, վորը ձռւլվելիս և յեղել աերևային բարձրիկների հետ (նկ. 111). Մի քանի տեսակների մոտ տեղի յնն ունեցել ցողովների յերկրորդային հաստացութերը, վորոնք կատարվելիս են յեղել կամրիումային ողակի միջոցով։ Ժամանակակից մերկասերմերի և յերկշաքիլ ծառերի նման քսիլինմայի ու ֆլուեմայի միջև ընկած և յեղել կամրիումը, վորը և դեպի ներս առաջացնում եր յերկրորդային բնափայտը, իսկ զեպի դուրս—յերկրորդային կեղև։ Լեպիդոդենդրոնները բազմանալիս են յեղել սպորների միջոցով։ Այս տեղ, ինչպես և ժամանակակից *Selaginella*-ի մոտ, առաջացել են միկրոսպորներ և մակրոսպորներ։ Սպորակիր հասկիները (լեպիդոդենդրոնների հասկիկները

կոչվում են *Lepidos-trobus*) նստած են յեղել ճյուղերի ծայրերին և զգալի մեծության եյին համառում (մինչև 30 մմ)։ Հասկիկի ներսում անցնելիս և յեղել մի առանցք (նկ. 112), վորին ամբանում եյին սպորոֆիլները, իսկ սպորոֆիլների վերևի կողմամբ անդավորվում եյին սպորանզիումները։ Նրանցից մի քանիսի մեջ զարգանում եյին բազմաթիվ մանր միկրոսպորներ։ Մյուսների մեջ զարգանում եյին խոշոր փշոտ թաղանթով




նկ. 111. *Lepidodendron selaginoides*. Ցողունի լոյնական հատվածը


պատված մակրոսպորների վերջիններիս ծլումը տեղի յեր ունենում այնպես, ինչպես *Selaginella*-ի մոտ՝ իգական սկզբնաձիլը գոյանում եր մակրոսպորի ներսում և անման զուզընթաց պատռում նըս թաղանթը և զուրս զալիս։ Մի քանի մելիոդենդրոնների մոտ (*Lepidocarpon* և *Miadesmia*) նկատվել են սերմ հիշեցնող գոյացութեր։ Նրանց մոտ մակրոսպորների ծլումը, սկզբնածիլիք առաջացումը, բեղմանավորումը

ու սաղմի առաջացումը — այս բոլորը տեղի յի ունեցել մայրական բույսի վրա՝ միկրոսպորանզիումների ներսումն իսկ բնօք՝ մակրոսպորանզիումը լրջապատված և յեղել հատուկ ծածկույթով, կամ բնակումնատով, վորը ձգվում եր յերկար յելուստի ձևով, և վորի ներսում զանգում եր անցք կամ միկրոպիլի։ Դրա միջոցով, ըստ յերկույթին, միկրոսպորն անցնում եր մակրոսպորանզիումի մեջ։

Սիգիլլարիայիների ընտանիքը (Sigillariaceae). Սիգիլլարիայիների ընտանիքը, բնշպես և Lepidodendraceae-ն, պարունակում և իր մեջ չըտածած ձևեր, վորոնք ապրելիս են յեղել լեռիդոզմենդրոնների հետ միաժամանակ։ Նրա զվարակոր ցեղն են սիգիլլարիաները (Sigillaria) (նկ. 113), Սիգիլլարիաները յեղել են շատ խոշոր ծառեր չափազանց յուրորինակ արտաքինով։ Նրանք ունեցել են բարձրը, ուղղամբարձ և հաստ բռն, վորը կամ բոլորովին չեր ճյուղավոր-



Նկ. 112. Lepidostrobus.
յերկայնական հասկածք։



Նկ. 113. Sigillaria.

վորմ, կամ շատ թույլ եր ճյուղավորվում, միայն զագաթին։ Բնի և ճյուղերի զագաթները ծածկված են յեղել յերկար ու նեղ տերեկներով։

Տերեները թափվելով, ցողունի վրա թողել են իրենց հետքերը, դրոշմական գործնք, ինչպես լեզվողովնորդուների մոտ, առաջացրել են տերեւոյին բարձիկներ. դրանք ծածկել են բունն ու ճյուղերը ամբողջովին. Տարեւը սիզիլլարիաների մոտ նրանք ունեցել են տարրեր, վորի հետեւանքով սիզիլլարիաների զանազան տեսակների մոտ ընի մակերևույթը տարրեր բնույթ և ունեցել. Մի քանիսի մոտ նրանք կանոնավոր վեցանկյաւնիների ձև են ունեցել. վորոնք միմյանցից սահմանագեցած են յեղել նեղ ակոսիկներով, ուրիշների մոտ նրանք զանավորված են յեղել յերկայնակի շարքերով և միմյանցից բաժանված յերկայնակի ակոսիկներով. տերեւային բարձիկների միջև լոյնակի սահմաններ չեն յեղել չերշապես, յերբորդների մոտ տերեւային բարձիկների միջև վոչ լայնակի և վոչ ել յերկայնակի սահմաններ են յեղել և նրանք ունեցել են շախմատային դաստիքություն. Սիզիլլարիաների համար վորով ստորերկրյա որգանները ծառայել են ստիգմարիաները, ինչպես այդ մենք տեսանք նաև լեզվողովնորդուների մոտ. Սիզիլլարիաների ցողունները ընդունակ են յեղել յերկրորդային հաստացում տալու, բայց խակական բնափայտը նրանց մոտ միջուկի և կեղեկի համեմատությամբ ավելի թույլ և զարգացած յեղել Սիզիլլարիաների բազմացման որգանները մեղ հասնել են շատ անկատար պինակում. Նրանք ներկայացրել եին անկատար խորոր հասկիկներ (սիզիլլարիաների հասկիկները կոչվում են *Sigillariostrobos*), վորոնք շատ նման են լեզվողովնորդունների հասկիկներին. Նրանց կենտրոնով անցնելիս և յեղել առանցքը, վորին ամրանում եին խիտ դաստիքած սպորտիկները. Սպորտիկների վերևի կողմում նստած են յեղել սպորանգիունները. Ըստ յերեւոյթին, բոլոր սիզիլլարիաները տարասպորային են յեղել: Հասկիկներն ամրացած են յեղել կամ ընի վրա կամ ճյուղերի վրա, տերեւններից ցած:

Լեզվողովնորդունները, սիզիլլարիաները և որանց մոտիկ մյուս ձևերն իրենց բուռն զարգացման շրջանում, քարածիսի եղորխայում, կարևոր գեր են խաղացել յերկրազնդի բուռսականության մեջ, ամբողջ անտառներ կազմելով. Նրանց մեացորդներն այն ժամանակվա ուրիշ բույսերի մեացորդների հետ միասին մասնակցել են քարածիսի և նավթի առաջացմանը:

Ինչպես յերեւում և վերև ըերված նկարագրությունից, լեզվողովնորդուններն ու սիզիլլարիաները շատ բարձր զիֆերնեցիացիա վերապրած ձևեր են յեղել վորոնք իրենց մի շարք առանձնատկություններով հիշեցնում են ժամանակակից յերկշաքիլ բույսերին կամ մերկասերմ ծառերին—իրենց մեծությամբ, նրանով, վոր կամբիումի ողնությամբ նրանք ընդունակ եին յերկրորդային հաստացումներ տալու և նրանով, վոր մերմեր ելին առաջացնում և այլն. Այս տեսակետից նրանք անհամեմատ ավելի բարձր են կանգնած մեղ ժամանակա-

կից գետնամասուներից ու սելագինելլաներից, վորոնք, ուրեմն, յերբեմի փարթամ զարգացած դասի չնշին նեացորդներն են ներկայացնում:

Isoëtales կարգ.

